# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 44 (1744) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 28, 2015
VOLUME 35, NO. 44 (1744) SATURDAY, NOVEMBER 28, 2015

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Յայտարարութիւն՝ ՍԴՀԿ Կենտրոնական Վարչութեան

Նախօրէին տեղի ունեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կենտրոնական վարչութեան լիագումար նիստ, որին ներկուսակցական, կազմակերպչական հարցերի հետ մէկտեղ քննարկուեց հայութեանը եւ Հայաստանին յուզող մի շարք հարցեր:

Նիստում ՍԴՀԿ կենտրոնական վարչութիւնը ողջունեց Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովի որոշումը՝ այն է Համահայկական Խորհրդի ստեղծումը: Հնչակեան կուսակցութիւնը յոյս յայտնեց, որ շուտով կը կազմուի հայեցակարգ եւ համահայկական խորհուրդը, որպէս գործուն մեխանիզմ, կեանքի կը կոչուի համահայկական մի շարք ծրագրեր իրագործելով:

Նաեւ արժեւորուեց եւ բարձր գնահատուեց Պետական յանձնաժողովի Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած քաղաքական եւ մշակութային միջոցառումները հայութեանն ու աշխարհին յաւուր պատշաճի ներկայացնելը:

Շեշտուեց նոր հանգրուանին պահանջատիրութեան հարցը իրաւական հարթութիւն տեղափոխելու նախաձեռնութիւնը:

Տարածաշրջանային իրադարձութիւնները նոյնպէս քննուեցին նիստի օրակարգում. Կենտրոնական վարչութիւնն անդրադարձաւ Թուրքիայի բացասական դերակատարութեանը Մերձաւոր Արեւելքի հակամարտութեան գօտում, իսկ Նոյեմբերի 1-ին Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրութիւնները որակուեցին որպէս հետ քայլ՝ երկրում ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների ոտնահարման եւ խօսքի ազատութեան սահմանափակման աննախադէպ աճի պատճառով:

Իսկ ներհայաստանեան զարգացումներին անդրադառնալով՝ ՍԴՀԿ կենտրոնական վարչութիւնը կենտրոնացաւ առաջիկայ Սահմանադրական բարեփոխումների հանրաքուէին, կողմ լինելով գործող համակարգի փոփոխութեանը, յոյս յայտնեց, որ Հայաստանում Սահմանադրական փոփոխութիւնները միտուած կը լինեն ոչ միայն իրաւական, այլեւ տնտեսական եւ ընկերային յարաբերութիւնների խթանմանն ու բարելաւմանը:

Լիագումար նիստում անդրադարձ եղաւ սիրիահայ համայնքի այսօրուայ խնդիրներին եւ սիրիական պատերազմի պատճառով տնտեսական եւ ընկերային ծանր պայմաններում գտնուող մեր համայնքին, ինչպէս նաեւ նրանց անվտանգութեան խնդիրներին: Առաջարկուեց շարունակել Սիրիայի հայրենակիցների օգնութեան եւ աջակցութեան գործում:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կենտրոնական վարչութիւնը լիագումար նիստի աւարտին վերահաստատեց իր դիրքորշումը՝ շարունակել միասնականութեամբ դիմագրաւել հայութեանն ու համազգային առկայ խնդիրներին եւ մարտահրաւէրներին:

*ՍԴՀԿ Կենտրոնական Վարչութիւն*
*Նոյեմբեր 24, 2015, Երեւան*

## Ստեփանակերտ Կը Յայտարարէ՝ «Նախկին Սահմաններին Վերադարձ Չի Լինի»

Մեկնաբանելով ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ճէյմս Ուորլիքն վերագրուող այն յայտարարութիւնները, թէ «Ղարաբաղի շուրջ գտնուող եօթը շրջանները պէտք է վերադարձուին», ԼՂՀ նախագահի մամուլի քարտուղար Դաւիթ Բաբաեան NEWS.am կայքէջին ըսած է որ, «Նախկին սահմաններին վերադարձ չի լինի»:

Դաւիթ Բաբաեանի համաձայն, ատրպէյճանական լրատուամիջոցները յաճախ այդպիսի տեղեկութիւններ կը հրապարակեն, իսկ երբեմն այնքան կը տարուին, որ միջնորդներուն կը վերագրեն «Լեռնային Ղարաբաղը Ատրպէյճանին վերադարձնելու մասին» յայտարարութիւններ:

«Այս դէպքում այն, որ այդպիսի տեղեկութեան աղբիւրն ատրպէյճանական լրատուամիջոցներն են, ինքնին կասկած է յարուցում»,- նշեց Դաւիթ Բաբաեանը: Միաժամանակ, ան ընդգծեց, որ 1920-21 եւ 1988-91 թուականներու սահմաններուն վերադարձ չի կրնար ըլլալ:

«Այդ սահմաններում Լեռնային Ղարաբաղը չի կարող որպէս ինքնիշխան պետութիւն գոյութիւն ունենալ: Դա համակենտրոնացման ճամբար է: Մենք այդպիսի ճամբարում ապրելու փորձ ունենք: Աւելին, դա Ատրպէյճանին կը մղի Լեռնային Ղարաբաղի, իսկ յետոյ՝ նաեւ Հայաստանի դէմ լայնածաւալ ագրեսիայի: Այդ պատճառով նախկին սահմաններին վերադարձ չի լինի»,- ընդգծած է Դաւիթ Բաբաեան:

Ատրպէյճանական ԱՊԱ գործակալութեան հրապարակման համաձայն, Ճէյմս Ուորլիք յայտարարած է, թէ Լեռնային Ղարաբաղի 7 շրջանները Ատրպէյճանի վերահսկողութեան վերադարձնելը հակամարտութեան համակողմանի կարգաւորման մաս կը կազմէ:

## Հնչակեան Պատուիրակութեան Հանդիպումը Լեռնային Ղարաբաղի Վարչապետ Արա Յարութիւնեանի Հետ



*Հնչակեան պատուիրակութիւնը հանդիպում կ՚ունենայ Արցախի վարչապետին հետ*

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, Նոյեմբեր 24-ին հանդիպում ունեցաւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան վարչապետ Արա Յարութիւնեանի հետ, որ Լոս Անճելոս կը գտնուէր «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան թելեթոնին մասնակցելու նպատակով:

Հանդիպումին ներկայ էին նաեւ Ուաշինկթընի մօտ Հայաստանի դեսպան եւ նախկին վարչապետ Տիգրան Սարգսեան, Միացեալ Նահանգներու մէջ Լեռնային Ղարաբաղի մշտական ներկայացուցիչ Ռոպերթ Աւետիսեան եւ Հիմնադրամի Արեւմտեան Ամերիկայի ատենապետ Անդրանիկ Պաղտասարեան:

Հանդիպումի սկզբնաւորութեան Արցախի վարչապետը ներկայացուց վերջին շրջանին Հիմնադրամի միջոցաւ կատարուած աշխատանքներն ու արձանագրուած նուաճումները, ինչպէս նաեւ անդրադարձաւ այս տարուայ ծրագիրներու կարեւորութեան, որոնք ուղղուած են բնակարանաշինութեան:

Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Գրիգոր Խոտանեան բարի գալուստ մաղթելով վարչապետին, անգամ մը եւս յայտնեց Հնչակեան Կուսակցութեան զօրակցութիւնը Արցախի պետականութեան եւ ժողովուրդին, ինչպէս նաեւ շեշտեց «Հայաստան» Համահայկական հիմնադրամի կարեւոր առաքելութեան նկատմամբ ունեցած վստահու-

Շար.ը էջ 5

## Արժանթինի Նորընտիր Նախագահը Եղած է Աջակից՝ Հայոց Ցեղասպանութեան Ճանաչման



Նոյեմբեր 22-ին, Արժանթինի մէջ կայացած նախագահական ընտրութիւններուն յաղթանակ արձանագրած Մաուրիսիօ Մակրի երկար ժամանակէ ի վեր աջակից եղած է Հայոց ցեղասպանութեան ճանաչման ոչ միայն Արժանթինի, այլեւ ամբողջ աշխարհի մէջ: Այս մասին կը տեղեկացնէ «Փրենսա Արմինիա»-ն:

Մայրաքաղաք Պուէնոս Այրէսի տեղական կառավարութիւնը ղեկավարելու տարիներուն Մակրի արգիլած էր քաղաքին մէջ տեղադրել Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի կիսանդրին, որու պատճառաւ ալ Թուրքիոյ նախագահ Էրտողան չեղեալ յայտարարեց իր պաշտօնական այցը Արժանթին:

2012-ին Երեւան կատարած այցի ժամանակ Մաուրիսիօ Մակրի այցելեց Հայոց Ցեղասպանութեան Թանգարան: 2015-ի Ապրիլին Մակրի իր ֆեյսպուքեան էջին վրայ յարգեց Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակը:

«Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելից. ես չեմ մոռանում ձեզ»,- գրած էր ան իր ֆեյսպուքի էջին վրայ:

Նախագահական ընտրութիւններուն Մաուրիսիօ Մակրի ստացած է ձայներու 53.2%-ը, իսկ իշխող «Յաղթանակի ճակատ» դաշինքի թեկնածու Դանիէլ Սցիոլին՝ 46.7%-ը:

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ**

# Որտե՞ղ Են Սերժ Սարգսեանի Հետ Հանդիպման Եկած Երիտասարդները

*ԴԱՒԻԹ ՄԱՆՈՒԿԵԱՆ*

Հայաստանը կառավարման համակարգում գրագէտ ու կրթուած մարդու կարիք ունի: Սա որեւէ մէկի նախընտրական ծրագրից արուած մէջբերում չէ: Այս կարգի արտայայտութիւններ ներկայ ու նախկին պաշտօնեաների կողմից արուել են:

Պաշտօնեան եւ նրա աշխատանքային թիմը կարող են հազար ու մի մարդկային թերութիւն ունենալ եւ դա վստահաբար կ'արտացոլուի նաեւ նրա աշխատանքում, բայց գոնէ եթէ պաշտօնեան տեսած ու գրագէտ է լինում, նա առնուազն չի վախենում իրեն շրջապատող գրագէտ մարդկանցից: Այսինքն՝ այս դէպքում կառավարման համակարգում ակամայ աւելանում են կիրթ ու գրագէտ մարդկանց թիւը, սկսում է գործել մրցակցութեան բնական օրէնքը եւ կառավարումը դրանից անպայման շահում է: Գրագէտ մարդը չի կարող հայրենասէր չլինել, որովհետեւ գրագիտութիւնը տգիտութեան հակակշիռն է: Միայն տգէտը կարող է չհասկանալ, որ իշխանաւոր լինելու համար նախ եւ առաջ պէտք է երկիրը լինի: Իսկ երկիրը որպէսզի անընդհատ լինի եւ ոչ թէ գնալով սպառուի, պէտք է զարգանայ:

«Լոյս» հիմնադրամի միջոցներով արտերկրի լաւագոյն բուհերում սովորողների հետ հանդիպումների ժամանակ Սերժ Սարգսեանը համարեա' ամէն անգամ կրկնում է հետեւեալ միտքը, որ Հայաստանում որակեալ կադրերի պակասը մեծ խնդիր է, ուստի լաւ կրթուած երիտասարդ կադրերի մեծ պահանջարկ կայ: «Պետութիւնը շահագրգիռ է կառավարման մարմիններում ընդգրկելու երիտասարդ որակեալ մասնագէտների: Մենք լայնածաւալ բարեփոխումներ ենք իրականացնում եւ ցանկանում ենք այդ գործընթացում կիրառել թէ' «Լոյս»-ի կրթաթոշակառուների, թէ' տարբեր հիմնադրամների աջակցութեամբ արտերկրում սովորող երիտասարդների եւ թէ' հայրենի բուհերի լաւագոյն ուսանողների գիտելիքներն ու փորձառութիւնը »,- սա մէջբերում է Սերժ Սարգսեանի խօսքից, որը նա ասել է «Լոյս» հիմնադրամի երիտասարդների հետ հանդիպմանը՝ դեռեւս 2009 թուականին: Անցել է 6 տարի, բնականաբար այս երիտասարդներից ոմանք արդէն կրթութիւնն աւարտել են. որտե՞ղ են նրանք այժմ, նրանցից քանի՞սն է աշխատում Հայաստանի պետական կառավարման, գիտական կամ էլ բիզնես ոլորտում: Հնարաւոր է, որ գիտական «բիզնես ոլորտները ուղղակիօրէն երկրի ղեկավարի տիրոյթից դուրս են, իսկ ինչո՞ւ այս կարգի երիտասարդները չեն ներգրաւուում պետական մարմիններում: Մեր պետական համակարգը այնքան կատարեալ է, որ չունի՞ հեղինակաւոր բուհերում կրթուած երիտասարդների կարիք:

Մենք սփիւռքում եւս ունենք բազմաթիւ բանիմաց մասնագէտներ, որոնց կրթութեան վրայ մեր պետութիւնը ոչ մի լումա չի ծախսել, սակայն կարող է օգտուել նրանց ներուժից: Աւելին՝ մեր տեղեկութիւններով՝ սփիւռքում շատերը սպասում են այդ հնարաւորութեանը, որոշները նոյնիսկ փորձել են ինքնադրսեւորման ասպարէզ գտնել Հայաստանում, բայց ոչինչ չի ստացուել:

Հայաստանում սովորաբար սփիւռքից միայն ներդրումներ են ակնկալում, բայց փորձը ցոյց է տալիս, որ ներդրումներ այդպէս էլ չեն արւում կամ էլ շատ քիչ են արւում: Սա փաստ է: Հայաստանի կառավարութիւնը պարտաւոր է ինքն իրեն հարցնել՝ ինչո՞ւ դրսում գտնուող հայկական կապիտալը չի հոսում Հայաստան, ինչո՞ւ են հայազգի գործարարները խուսափում հայրենիքում աշխատատեղ բացելուց եւ փոխարէնը գերադասելով բարեգործութիւնը: Պատճառը պարզ է. չեն վստահում Հայաստանի կառավարման փտած համակարգին ու նոյնքան փտած բիզնես դաշտին: Հայաստանում ներդրում կատարելը սփիւռքում ընկալում են «քցուել» բառիս իսկական իմաստով: Որքան էլ Հայաստանի իշխանութիւնները փորձեն կոկորդ պատռել, թէ մենք ներդրումների համար բաց ենք, մեզ մօտ չկայ հարկային խտրականութիւն ու բիզնես տեռոր, միեւոյնն է՝ բոլորն են հասկանում, որ Հայաստանում գործ դնել՝ նշանակում է տանուլ տալ, եթէ դու չունես ուղղակի հովանաւորչութիւն՝ «կռիշա» կամ պատրաստ չես աշխատածիդ կէսը մուծուել: Հայաստանի իշխանութիւնը պարտաւոր է լուրջ ինքվերլուծութիւն կատարել ու հասկանալ՝ ինչո՞ւ երկիրը չի կարողանում յաղթահարել վստահութեան բարիերը: Այդպիսի մի պատնէշ կարող էր դիտուել, օրինակ, որոշ պատասխանատու օղակներում սփիւռքի ներկայացուցիչների ներգրաւումը՝ խօսքն այնպիսի մարդկանց մասին է, ովքեր կը կարողանային նախ բարձրացնել կառավարման արդիւնաւէտութիւնը եւ երկրորդ՝ կը բերէն վստահութեան քուոտա: Ի վերջոյ՝ այսօրուայ կոռումպացուած ու ուռճացուած պետական համակարգին, որտեղ նստած են ՀՀԿ-ի կրծքանշանը կրող հին ու նոր պաշտօնեաների բոլոր բարեկամները, ընտանիքի անդամները, ընկերներն ու քոյր-եղբայրները, ո՞ր մի նորմալ մարդը կը վստահի: Կոնեակ- բոմբոներկայի տրամաբանութեամբ աշխատող մեր չինովնիկները բանիմաց կադրերին դժկամութեամբ են ընդունում, որովհետեւ այդպիսի մարդկանց ներկայութիւնը շատ ցցուն է դարձնում իրենց պէսների անպէտքութիւնը: Այսպէս թէ այնպէս՝ պետական գերատեսչութիւնների բոլոր վարչութիւններում հիմնական աշխատանք կատարողները երկու-երեք հոգի են, մնացածը պարազիտութեամբ են զբաղւում՝ ընդամէնը աթոռ ու սենեակ զբաղեցնելով ամսուայ վերջում ռոճիկ են ստանում: Պետական համակարգի ուղիղ 50 տոկոսը վստահաբար պէտք է կրճատել, մնացածների աշխատավարձը դրա հաշուին բարձրացնել ու նրանց առջեւ դնել բարձր պահանջներ: Նման համարձակութեան ոչ կառավարութիւն մինչեւ վերջ չի գնում: Արդիւնքում խնամի-ծանօթ-բարեկամներին վատութիւն չանելու, որոշների դէպքում նաեւ սոցիալական խնդիր լուծելու համար բիւջէն իր շալակին պահում է հսկայական մեծ

# Ինչպէս Է Սերժ Սարգսեանն Ասելու Այդ Նորութիւնը

*ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ*

Դեկտեմբերի 6-ին Հայաստանում կայանալու է սահմանադրական հանրաքուէ: Հաւանականութիւնը, որ իշխանութիւնը «կ'անցկացնի» փոփոխութիւնները, մեծ է, սակայն կայ նաեւ հաւանականութիւն, որ բարեփոխումների հակառակորդները կը կարողանան համոզել հանրութեանը «ոչ» ասել, կամ էլ այդ օրն «անկարգութիւններ» կազմակերպել: Դեկտեմբերի 1-ին հանրահաւաք է նշանակուած, պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը յայտարարել է, որ ընդդիմութիւնն անհնազանդութեան ակցիաների շարք է սկսելու:

Անկարգութիւնների ու անհնազանդութեան նախադրեալները բազմաթիւ են: Երկրում սոցիալ-տնտեսական վիճակն աղէտալի է դառնում, Հայաստանը խրուած է պարտքերի մէջ, եւ մի փոքր կայծը բաւարար է, որ վիճակը դուրս գայ

> Երկրում սոցիալ-տնտեսական վիճակն աղէտալի է դառնում. Հայաստանը խրուած է պարտքերի մէջ, եւ մի փոքր կայծը բաւարար է, որ վիճակը դուրս գայ վերահսկողութիւնից

վերահսկողութիւնից: Իշխանութիւնները, հաւանաբար, պատրաստւում են այդպիսի ընթացքի, որովհետեւ բոլորից լաւ գիտեն իրական վիճակը:

Հայաստանում կարեւոր ներքաղաքական իրադարձութիւնները միշտ ուղեկցուել են սահմանին էսկալացիայով: Սահմանային էսկալացիան շատ անգամ է «փրկել» իշխանութեանը ներքին քաղաքական պայթիւնից: Հաւանաբար, այս անգամ էլ այդ գործօնը կարող է օգտագործուել:

Նոյեմբերի 12-ին Սերժ Սարգսեանն Անվտանգութեան խորհրդի նիստ է հրաւիրել, որպէսզի քննարկեն մէկ ամիս առաջ տեղի ունեցած Շանթ-2015 զօրավարժութիւնը: Սերժ Սարգսեանը նիստի ժամանակ յայտարարել է, որ զօրավարժութիւնների տրամաբանութիւնը պարզ է՝ «այն պետական մարմինները հակառակորդի հաւանական ագրեսիային նախապատրաստելու աշխատանքների շարունակութիւնն է»: Այսինքն, հասկացնել է տուել, որ ագրեսիան հաւանական է, եւ պետական մարմինները պատրաստւում են դրան: Այդ ֆոնին հանրաքուէն այնքան էլ կարեւոր չի թւում:

Սերժ Սարգսեանը մեկնեց Ղարաբաղ եւ Բակօ Սահակեանի հետ միասին ներկայ գտնուեց զօրավարժութիւնների: Դա եւս մէկ անգամ պէտք է յիշեցնել, որ ռազմական ագրեսիան չեմին է, եւ Հայաստանը կ'աջակցի Ղարաբաղին սպառնալիքի դէպքում:

Դեկտեմբերի 1-ին Փարիզում հնարաւոր է կայանայ Սերժ Սարգսեանի ու Իլհամ Ալիեւի հանդիպումը, որտեղ չի բացառւում որոշակի համաձայնագրի ստորագրումը, որը կ'ամրապնդի հրադադարի ռեժիմը կամ էլ ինչ-որ քայլեր, որոնք Հայաստանը կ'ապահովագրեն կտրուկ որոշումներից:

ՀՀԿ խօսնակ Էդուարդ Շարմազանովը յայտարարել է, որ Դեկտեմբերի սկզբին Սերժ Սարգսեանը մեծ հարցազրոյց է տալու: Փաստօրէն, այդ հարցազրոյցը լինելու է Փարիզում հանդիպումից յետոյ եւ հանրաքուէից առաջ:

Հարցազրոյցում Սերժ Սարգսեանը պէտք է շատ ծանրակշիռ փաստարկներ ներկայացնի հանրաքուէի համար հող ապահովելու համար: Հնարաւոր է, նա կը յայտարարի, որ ագրեսիայի հաւանականութիւն կար, սակայն հմուտ դիւանագիտութեան շնորհիւ յաջողուել է կանխել այն:

Սերժ Սարգսեանին ծանրակշիռ փաստարկներ են պէտք մինչեւ Դեկտեմբերի 6-ը, իսկ դրանք կարող են լինել անվտանգութեան որոշակի երաշխիքները Ղարաբաղում եւ սահմաններին: Փարիզում հնարաւոր կը լինի՞ նման երաշխիքների հասնել, եւ ինչ տարբերակով: Եւ գլխաւորն այն է, թէ կը յաջողուի՞ խուսափել սովորական դարձած սահմանային էսկալացիայից եւ իշխանութեան պատասխան քայլերից:

«ԼՐԱԳԻՐ»

Ներողութիւն՝ բայց ո՞վ է իրաւունք տուել պետութեան ղեկավարներին՝ հարկատուներիս վճարած փողերի հաշուին իրենց ուզած մարդկանց լաւութիւններ անել. լաւութիւն թող անեն սեփական գրպանի հաշուին, պետութեան հաշուին ոչ ոք լաւութիւն շռայլելու իրաւունք չունի:

«ՀԱՅԵԼԻ»

www.massispost.com


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Եւ «Այո»-ի, Եւ «Ոչ»-ի Ճակատը Վստահ Է՝ Դեկտեմբերի 6-ին Իր Տեսակէտն Է Յաղթելու

*Դեկտեմբերի 6-ի սահմանադրական հանրաքուէից յետոյ իշխանութիւնը յայտնուելու է շատ ծանր վիճակում, նման համոզմունք յայտնեց «Ոչ»-ի շտաբի պետ, Ազգային ժողովի Հայ ազգային գոնկրես (ՀԱԿ) խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը՝ ընդգծելով, որ արդէն իսկ բոլորի համար ակնյայտ է՝ «ոչ»-ը յաղթել է:*

*«Կարծում եմ՝ իշխանութիւնը յայտնուելու է շատ ծանր վիճակի մէջ, որովհետեւ արդէն ակնյայտ է, որ ժողովուրդը մերժում է իշխանութեանը, մերժում է սահմանադրական փոփոխութիւնները: Դուք էլ բոլորդ արդէն գիտէք, որ «ոչ»-ը յաղթած է, եկէք ձեւականութիւն չանենք, գնացէք գիւղեր, մարդկանց հետ խօսէք... դուք էլ բոլորդ «ոչ»-ի կողմնակից էք, ես վստահ եմ: Ու շատ լաւ գիտէք ժողովրդի տրամադրութիւնը: Հասկանալի է, որ եթէ լինէր ազատ, արդար ընտրութիւն, հանրաքուէ, իշխանութիւնը տասը տոկոսի շանս չէր ունենայ: Սա է պատկերը»,- ասաց Զուրաբեանը:*

*«Պատկերացրէք, եթէ նրանք ապահովեն «այո»-ի յաղթանակը: Ամբողջ ժողովրդի համար եւ ոչ միայն մեր ժողովրդի համար, ամբողջ միջազգային հանրութեան համար պարզ կը լինի, որ Հայաստանում ոտնահարուել է հայ ժողովրդի կամքը: Արդէն պարզ է, թէ ո՞րն է հայ ժողովրդի կամքը: Հիմա դա պրոբլեմ է առաջացնում ո՞ւմ համար. պարզ չէ՞, որ այդ կամքը արհամարհող իշխանութեան համար»,- յաւելեց Զուրաբեանը:*

*Իշխող Հանրապետական կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանը մինչդեռ հակադարձում է՝ Դեկտեմբերի 6-ին «այո»-ն է յաղթելու, եւ պէտք է պարզել, թէ դրանից յետոյ «ոչ»-ի ջատագովներն ինչ վիճակում են յայտնուելու:*

*«Ո՞ր Դեկտեմբերի 6-ից յետոյ՝ 99 թուականի, 2000, 2001... 15 տարի է անընդհատ լսում ենք ինչ-որ օրեր՝ Դեկտեմբերի 6, Նոյեմբերի 1, աշունը, գարունը եւ այլն: Այդ գործչի [Լեւոն Զուրաբեանի] վաղեմի երազանքն է, 98 թուականից նոր մանկութիւն է արթնացել իր մէջ, եւ դա իր մանկական երազանքն է: Իհարկէ, մի փոքր մանկութիւնը երկար է տեւում, բայց ոչինչ, կը յարմարուենք: Բնականաբար, ես համոզուած եմ, որ ժողովուրդը կը տայ իր դրական քուէն, եւ արդէն այդ հարցը պէտք է տաք իրենց, թէ «ոչ»-ը ինչ կարգավիճակում կը յայտնուի»,- ասաց Բաղդասարեանը:*

*«Ոչ»-ի ճամբարից առանձին Րաֆֆի Յովհաննիսեանի եւ Ժիրայր Սեֆիլեանի ղեկավարած «Նոր Հայաստան» շարժումը նպատակ ունի Դեկտեմբերի 1-ից նախատեսուած հանրահաւաքների միջոցով տապալել հանրաքուէն եւ իշխանափոխութիւն իրականացնել: «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանին հարցրեցինք, թէ որքանո՞վ է իրատեսական իրենց սցենարը՝ հաշուի առնելով, որ «Նոր Հայաստան»-ի մարզային հանդիպումներին հաշուուած մարդիկ են մասնակցում:*

*«Ես ռեալ եմ համարում, ամէն ինչ ռեալ եմ համարում: Դուք գիտէք, որ մենք յայտարարել ենք անհնազանդութեան միջոցառումների սկիզբը, որը պէտք է մեկնարկի Դեկտեմբերի 1-ից: Ես չեմ ասում, որ Դեկտեմբերի 1-ին մենք յեղափոխութեան օրն ենք նշանակում: Այդպէս չէ՛: Բայց Դեկտեմբերի 1-ից մենք սկսում ենք անհնազանդութեան գործողութիւնների մի շարք»,- ասաց Փոստանճեանը:*

# ՀՀԿ Պատգամաւորը Չի Կիսում Ռոբերդ Քոչարեանի՝ Սահմանադրական Փոփոխութիւններին Վերաբերող Տագնապները

*Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր, ֆինանսավարկային եւ պիւտճէտային հարցերով խորհրդարանարական յանձնաժողովի նախագահ Գագիկ Մինասեանը չի կիսում Ռոբերդ Քոչարեանի՝ սահմանադրական փոփոխութիւններին վերաբերող տագնապները: Այս մասին Մինասեանը յայտնել է Նոյեմբերի 21-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ:*

*Նրա խօսքով՝ մեծամասնական համակարգից հրաժարուելը կը բերի ոչ թէ ինչ-որ կուսակցութեան իշխող դերի պահպանմանը, այլ ընդհակառակը՝ կոալիցիայի ձեւաւորմանը եւ բազմակուսակցական համակարգի ստեղծմանը, ինչը բնորոշ է քաղաքակիրթ երկրներին:*

*Բացի այդ, նա նշել է, որ սահմանադրական փոփոխութիւններն ապահովում են առանց ցնցումների իշխանափոխութիւնը:*

*Յիշեցնենք, որ աւելի վաղ Ռոբերդ Քոչարեանը կարծիք էր յայտնել, որ սահմանադրական փոփոխութիւնների նախագիծը դե ֆակտո միակուսակցական համակարգ հաստատելու, նշանակում է՝ քաղաքական մենիշխանութեան եւ լճացման էական ռիսքեր է պարունակում:*

# Հայաստանում 900 Հազար Մարդ Աղքատ Է

*Հայաստանի 10 բնակչից 3-ը չի կարողանում յաղթահարել ամսական 40,264 դրամի շեմը: Սա վիճակագրական վարչութեան տուեալն է 2014 թուականի դրութեամբ: Այս հաշուարկների համաձայն՝ 2014-ին մեր երկրի աղքատութեան մակարդակը կազմել է 30%:*

*2014թ. աղքատների ընդհանուր թիւը կազմել է շուրջ 900 հազ. մարդ, նրանցից շատ աղքատ է 330 հազարը, իսկ վերջիններից ծայրայեղ աղքատ է 70 հազարը:*

*Երեւանում աղքատութեան մակարդակն աւելի ցածր է, քան այլ քաղաքային բնակավայրերում: Մայրաքաղաքում այն 25,2 տոկոս է, միւս քաղաքներում ՝ 30: Գիւղական բնակավայրերում աղքատութիւնը կազմել է 29.9 տոկոս:*

*Սակայն մեր քաղաքացիները այս թուերին չեն հաւատում: Նրանք հաւաստիացնում են, որ մարդկանց կենսամակարդակը տարէցտարի վատանում է:*

# «Նոր Սահմանադրութեամբ Պետութիւնը Պարտաւոր է Իրականացնել Հայրենադարձութեան Ծրագիր»



*ԱԺ աշխատակազմի ղեկավար Հրայր Թովմասեան*

*Նոր սահմանադրութիւնով ամրագրւում է, որ պետութիւնը պարտաւոր է իրականացնել հայրենադարձութեան ծրագիր: Այս մասին Նոյեմբերի 23-ին, Արարատի մարզի Արտաշատ քաղաքում սահմանադրական փոփոխութիւններին նուիրուած «Իրապատում» հեռուստանախագծի շրջանակում ասել է ԱԺ աշխատակազմի ղեկավար, գլխաւոր քարտուղար Հրայր Թովմասեանը, որը ներկայացնում է «Այո»-ի ճակատը:*

*«Մենք, ցաւօք, ունենք արտագաղթ: Առաջին անգամ Սահմանադրութիւնով ամրագրւում ենք, որ պետութիւնը պէտք է իրականացնի հայրենադարձութեան ծրագիր: Այսինքն՝ անկախ, թէ ով է լինելու կառավարութիւնում, պէտք է իրակացնեն այդ ծրագրերն ինչպէս 60-ականների կէսերին»,- ասել է նա:*

*Հրայր Թովմասեանի խօսքով՝ սահմանադրական փոփոխութիւնները դրական են անդրադառնում նաեւ դատական համակարգի վրայ: Նա նշել է նաեւ, որ սահմանդրական փոփոխութիւններով սահանւում է, որ կառավարութիւնը երեք տեսակի հաշուետուութիւն պէտք է ներկայացնի ժողովրդին:*

*«Պէտք է ներկայացնի հաշուետուութիւն պիւտճէի վերաբերեալ, իր իրականացրած ծրագրերի վերաբերեալ, սոցիալական, տնտեսական, մշակութային ոլորտում իրականացրած քաղաքականութեան մասին»,- ասել է նա՝ նշելով, որ Նոր Սահմանադրութեան ընդունումից յետոյ մենք ունենալու ենք աւելի հզօր հայրենիք, արդիւնաւէտ կառավարութիւն, իրականութիւն է դառնալու այն սահմանադրական նորմը, որ մարդը, նրա իրաւունքներն ու ազատութիւնները բարձրագոյն արժէք են:*

# «Հանրաքուէի Օրը Չհանդուրժել Թաղի Տղաներին, Թաղային Հեղինակութիւններին». Վլադիմիր Գասպարեան

*Սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէի անցկացման օրը՝ Դեկտեմբերի 6-ին, ոստիկանութիւնը թոյլ չի տալու կուտակումներ ընտրատեղամասերի տարածքներում: Այս մասին Նոյեմբերի 23-ին, ոստիկանութիւնում տեղի ունեցած օպերատիւ խորհրդակցութեան ժամանակ ասել է ոստիկանութեան պետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարեանը:*

*«Չհանդուրժել թաղային հեղինակութիւններին, թաղի տղաներին, եւ այլն երեւոյթների, կուտակումներ այս կողքը, այն կողքը»,- խորհրդակցութեան մասնակիցներին է դիմել նա:*

*Վլադիմիր Գասպարեանը նշել է, որ ոստիկանութիւնը հանրաքուէի անցկացման օրը յատուկ ուշադրութիւն է դարձնելու սահմանափակ ֆիզիկական կարողութիւն ունեցող քաղաքացիներին օժանդակելու խնդրին:*

*«Բացարձակ ձեր վրայ էք վերցնում՝ օգնել, տեղափոխել, բարձրացնել, իջացնել, բացի քուէարկութեան տեղը մուտք գործելուց»,- ասել է նա:*

*Ոստիկանութեան պետը նշել է, որ անհրաժեշտ է անվտանգութեան բարձր մակարդակ ապահովել ինչպէս հանրաքուէի, այնպէս էլ դրան նախորդող օրերին:*

# «Որեւէ Զինուորական Պարտադրուած Չի Գնալու Քուէարկելու». Մովսէս Յակոբեան

*Զինուած ուժերի կառուցուածքն այնպիսին է, որ հնարաւորութիւն է տալիս ցանկացած ժամանակ կայուն ղեկավարել, նաեւ սահմանադրական փոփոխութիւնների պարագայում: Այս մասին, Նոյեմբերի 23-ին, ԱԺ-ում լրագրողների հետ զրոյցում նշել է ՀՀ Զինուածու ուժերի գլխաւոր շտաբի պետի տեղակալ Մովսէս Յակոբեանը՝ անդրադառնալով ընդդիմութեան այն մտահոգութիւններին, որ սահմանադրական փոփոխութիւններից յետոյ խաղաղ պայմաններում չի լինելու գերագոյն գլխաւոր հրամանատար, իսկ պատերազմի դէպքում՝ որոշում կայացնելու լիազօրութիւնը բաշխուելու է տարբեր թեւերի միջեւ, ինչն դա անորոշութիւն է ստեղծելու:*

*Նա նշել է, որ որպէս զինուորական իրեն չի թոյլատրւում կարծիք յայտնել սահմանադրական փոփոխութիւնների նախագծի վերաբերեալ: Դիտարկմանը, թէ պաշտպանութեան նախարարը ակտիւօրէն «այո» է քարոզում, նա արձագանգել է. «Պաշտպանութեան նախարարը քաղաքական պաշտօն է եւ նա իրաւունք ունի իր կարծիքն արտայայտելու»:*

*Մովսէս Յակոբեանը վստահեցրել է, որ հանրաքուէի ժամանակ զինուորականներին չի պարտադրուելու «այո» ասել: «Կարող էք վերահսկել, դուք դրա լիազօրութիւններն ունէք: Կարծում եմ, որեւէ մի քաղաքացի պարտադրուած չի գնալու քուէարկելու»,- ընդգծել է Մովսէս Յակոբեանը:*

*Դիտարկմանը, որ ԼՂՀ նախագահ Բակօ Սահակեանը յայտարարել է, որ իրենք կարող են քննարկել Ստեփանակերտի օդանաւակայանը Սիրիայում ահաբեկչութեան դէմ պայքարի համար օգտագործելու հարցը, եւ արդեօք արժէ՞ Ղարաբաղը ներքաշել Սիրիայում ահաբեկչութեան դէմ պայքարի մէջ, նա արձագանգելն է. «Դա իմ ոլորտը չէ»:*

## ԼՈՒՐԵՐ

# ԵԽԽՎ Զեկոյցը Միայն Ջուր Է Լցնում Ատրպէյճանի Քարոզչամեքենայի Ջրաղացին



Հայաստանի ԱԳ նախարարի տեղակալ Շաւարշ Քոչարեան

Եւրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի սոցիալական հարցերի յանձնաժողովում հերթական ամօթալի փաստն է արձանագրուել. առանց քննարկման առարկայ հանդիսացող վայր այցելութեան Սարսանգի ջրամբարի մասին զեկոյց է պատրաստուել եւ ընդունուել:

«ԵԽԽՎ սոցիալական հարցերի յանձնաժողովի կողմից Սարսանգի ջրամբարի վերաբերեալ զեկոյցի նախագիծը միայն ջուր է լցնում Ատրպէյճանի քարոզչամեքենայի ջրաղացին եւ տեղաւորւում է Պաքուի կողմից բանակցային գործընթացի ձախողման փորձերի մէջ»,- NEWS.am-ի հետ զրոյցում ասել է ԱԳ նախարարի տեղակալ Շաւարշ Քոչարեանը:

«Բոլորովին վերջերս մենք ականատես եղանք բրիտանացի պատգամաւոր Ուոլթերի՝ ԵԽԽՎ քաղաքական հարցերի յանձնաժողովում ներկայացրած զեկոյցի նախագծի վերաբերեալ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների արձագանգին: Դրանում մասնաւորապէս ասւում էր, որ հաշուի առնելով բանակցութիւնների զգայնութիւնը՝ զուգահեռ մեխանիզմներ ստեղծելուն ուղղուած փորձերը կարող են խաթարել բանակցային գործընթացը եւ խոչընդոտել առաջընթացը: Անշուշտ, այս միանշանակ գնահատականից յետոյ ԵԽԽՎ այժմ արդէն Սոցիալական հարցերի յանձնաժողովում եւս մէկ զեկոյցի նախագծի ներկայացումը, որով աղաւաղւում են ԼՂ հակամարտութեան կարգաւորմանն առնչուող հարցերը, բացայայտօրէն միտուած է եռանախագահների՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի ուղղութեամբ իրականացուող ջանքերի խափանմանը»,- նշել է Քոչարեանը:

Ըստ ԱԳ փոխնախարարի, զեկոյցի նախագիծը միայն ջուր է լցնում Ատրպէյճանի քարոզչամեքենայի ջրաղացին եւ տեղաւորւում է Պաքուի կողմից բանակցային գործընթացի ձախողման, Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմաններին եւ Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծում իրավիճակը սրելու ապրեջանական անդադար փորձերի, հիմնահարցի քննարկումը այլ ձեւաչափեր տեղափոխելու ձգտման, եռանախագահներին անընդհատ քննադատելու քաղաքականութեան տրամաբանութեան մէջ: «Մտահոգութեան տեղիք է տալիս այն հանգամանքը, որ կամայ, թէ ակամայ Ատրպէյճանի քարոզչամեքենայի գործիք են դառնում նաեւ ԵԽԽՎ որոշ պատգամաւորներ, ովքեր, քուէարկութեամբ սպիտակը սեւ որակելով, սեւացնում են առաջին հերթին հենց իրենց եւ փորձում ստուեր գցել ԵԽԽՎ հեղինակութեան վրայ:

# Ռ. Կիրակոսեան.- «Սիրիայում միշտ կայ էսկալացիայի Սպառնալիք»



Քաղաքական վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսեան

Սիրիայում միշտ էլ կայ ռազմական էսկալացիայի սպառնալիք: Խօսքը ոչ թէ միտումնաւոր, այլ պատահական էսկալացիայի մասին է: Այս մասին Նոյեմբերի 24-ին լրագրողներին յայտնել է Տարածաշրջանային հետազօտութիւնների կենտրոնի տնօրէն, վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսեանը՝ անդրադառնալով այն հարցին, որ թուրքական ԶՈւ ոչնչացրել են Սիրիայի օդային տարածքով թռչող ռուսական ռազմական օդանաւը:

Այդ սպառնալիքը, նրա խօսքով, կայ ոչ միայն թուրքական ու ռուսական զինուած ուժերի՝ այլեւ ամերիկեան եւ «Իսլամական պետութիւն» խմբաւորման դէմ պայքարող միւս դաշնակիցների զինուած ուժերի միջեւ: «Հայաստանում ռուսական ռազմակայանը կ՚օգտագործուի Սիրիայում ռուսական օդային արշաւին օպերացիոն աջակցութիւն ապահովելու նպատակով: Բայց դա պարտադիր չէ, որ վատ լինի, դա նշանակում է, որ Հայաստանը մեծ նշանակութիւն կ՚ունենայ »,- շեշտել է Ռիչարդ Կիրակոսեանը:

Նշենք, որ Սիրիայում, Թուրքիայի հետ սահմանից ոչ հեռու ոչնչացուել է ռուսական «Սու 24» օդանաւը: Ենթադրւում է այն գետնից է գնդակոծուել: Ըստ Ռուսաստանի Պաշտպանութեան նախարարութեան՝ ոչնչացուած օդանաւը գտնւում էր բացառապէս Սիրիայի տարածքում: Դա արձանագրուած է վերահսկողութեան օբիեկտիւ միջոցներով: Թուրքական առաջատար լրատուամիջոցները նախ յայտնել էին, որ թուրքական ՌՕՈւ երկրի օդային տարածքի խախտման պատճառով են կրակել ռուսական օդանաւի վրայ, իսկ յետոյ էլ գրել, որ ոչնչացուել է Սիրիայի ՌՕՈւ ռուսական արտադրութեան օդանաւը: կավարութեան հետ:

# Վարչապետի Երկու Արտերկրեայ Այցերի Ժամանակ Յուշանուէրների Վրայ 7 Միլիոն Դրամ Է Ծախսուել



ՀՀ Վարչապետ Յովիկ Աբրահամեան

40 տարուայ հնեցման կոնեակներ, թանկարժէք գորգեր, գինի եւ չիր: Այս ամէնը վարչապետ Յովիկ Աբրահամեանի գլխաւորած կառավարութիւնը ձեռք է բերել որպէս յուշանուէր՝ Ջինաստան եւ Տաճիկստան կատարած այցերի համար՝ պիւտճէից ծախսելով ընդհանուր առմամբ շուրջ 7 միլիոն դրամ:

Վարչապետի գլխաւորած կառավարական պատուիրակութիւնը Սեպտեմբերին աշխատանքային այցով մեկնել էր Ջինաստանի Ժողովրդական Հանրապետութիւն: Աբրահամեանի որոշման հիման վրայ՝ այցի համար որպէս յուշանուէր «Մեգերեան Կարապետ» ընկերութիւնից ձեռք է բերուել 3 ձեռագործ բամպակեայ գորգ՝ 4 միլիոն 200 հազար դրամ ընդհանուր արժէքով: Շուրջ 1.5 միլիոն դրամ է ծախսուել կոնեակների ձեռքբերման համար, այդ թւում՝ 1 շիշ 40 տարուայ հնեցման «Սպարապետ» կոնեակը՝ 400 հազար դրամով, եւ երկու շիշ «Կիլիկիա» կոնեակ՝ իւրաքանչիւրը 200 հազար դրամով:

Երեւանի նախկին քաղաքապետ Վահագն Խաչատրեանը չի ժխտում՝ յուշանուէրները պէտք են, բայց ասում է՝ դրանք պէտք է համապատասխանեն տուեալ երկրի հնարաւորութիւններին:

«Հարցնում ենք մեր պիւտճէի վիճակը ոնց է՝ պարզւում է մեր պիւտճէն պահուստային միջոցներ չունի, որի պատճառով, ես գիտեմ, որ տարբեր ծրագրեր սառեցուել են: Մենք պէտք է ներկայանալի լինենք, բայց ամէն մէկս ներկայանում ենք մեր հնարաւորութիւնների սահմանում»,- ասաց Խաչատրեանը:

Կառավարութեան աշխատակազմից «Ազատութեան» հարցմանն ի պատասխան նշում են, որ արտասահմանեան այցելութիւնների կազմակերպման նպատակով հուշանվերների ընտրութեան, ինչպէս նաեւ դրանց քանակների եւ տեսականու որոշման ժամանակ հաշուի են առնւում մի շարք հանգամանքներ, մասնավորապէս՝ այցի նպատակը, պատօնական հանդիպումների քանակը, տուեալ երկրի ազգային առանձնահատկութիւնները, դիւանագիտական յարաբերութիւնների մակարդակը եւ այլն:

# Աւետիսեանների Սպանութեան Նախաքննութիւնը Աւարտուել Է

Դատախազութիւնը Աւետիսեանների սպանութեան գործն ուղարկել է դատարան: Հայաստանի գլխաւոր դատախազութեան հանրային կապերի բաժնից «Ազատութեան»-ը փոխանցեցին, որ մեղադրական եզրակացութիւնը հաստատուել է հսկող դատախազի կողմից եւ ուղարկուել Շիրակի մարզի առաջին ատեանի ընդհանուր իրաւասութեան դատարան:

Գիւմրիում Աւետիսեանների ընտանիքի անդամների սպանութեան դէպքի առթիւ յարուցուած քրէական գործի նախաքննութեան աւարտի մասին աւելի ուշ հաղորդագրութիւն տարածեց նաեւ Հայաստանի քննչական կոմիտէն:

«Քրէական գործով իրականացուած նախաքննութեամբ բաւարար ապացոյցներ են ձեռք բերուել առ այն, որ 2015 թուականի Յունուարի 12-ին Աւետիսեանների ընտանիքի անդամների սպանութիւնը կատարուել է Գիւմրի քաղաքում տեղակայուած Ռուսաստանի 102-րդ ռազմաբազայի զինծառայող Վալերի Պերմյակովի կողմից, որը զուգորդուել է աւազակութեամբ, բացի այդ, բնակարան ապօրինի մուտք գործելով եւ զէնքի գործադրմամբ աւազակային յարձակման եղանակով՝ յափշտակուել է գոյք, որից յետոյ փորձ է արուել ապօրինի հատել Հայաստանի պետական սահմանը», - ասուած է հաղորդագրութիւնում:

«Նախնական քննութեամբ հիմնաւորուել է, որ ժամը 06-ի սահմաններում հասնելով Գիւմրի քաղաքի Միասնիկեան փողոցի 188-րդ հասցէի տան մօտ, զէնքի գործադրմամբ աւազակային յարձակման եղանակով ուրիշի գոյքը յափշտակելու դիտաւորութեամբ՝ դարպասի բաց դռնակից մտել է բակ, մօտեցել տանը, սուին դանակով մուտքի դռան ապակին հանելու եւ ներսի կողմից փականի վրայ մնացած բանալիով դուռը բացելու միջոցով ապօրինի մուտք է գործել նշուած տուն, որտեղ երկու եւ աւելի անձանց ապօրինաբար կեանքից զրկելու դիտաւորութեամբ՝ իր մօտ եղած ԱԿՍ-74 տեսակի ինքնաձիգից ուղիղ նշանառութեամբ արձակած 28 կրակոցով տեղում սպանել է նոյն տան բնակիչներ Աիդա Աւետիսեանին, Յասմիկ Աւետիսեանին, Սերիոժա Աւետիսեանին, Արմէն Աւետիսեանին, Արաքսիա Պօղոսեանին եւ մանկահասակ Յասմիկ Աւետիսեանին», - ասուած է Քննչական կոմիտէի հաղորդագրութիւնում. - «Այնուհետեւ մանկահասակ Սերիոժա Աւետիսեանին առանձին դաժանութեամբ սպանելու դիտաւորութեամբ, ինքնաձիգին ամրացուած սուին-դանակով հինգ հարուած է հասցրել մօր գրկում, անօգնական վիճակում գտնուող երեխայի մարմնի կենսական կարեւոր օրգաններին, թէեւ ունէր երկու փամփուշտով լիցքաւորուած ինքնաձիգ եւ երեսուն փամփուշտով լիցքաւորուած պահեստային պահունակ: Ստացած մարմնական վնասուածքների հետեւանքով մանկահասակ երեխան հիւանդանոցում եօթ օր անց մահացել է»:

Ըստ կոմիտէին, նախաքննութեամբ ձեռք բերուած ապացոյցների համակցութեամբ, Պերմյակովին մեղադրանք է առաջադրուել Հայաստանի քրէական օրէնսգրքի 104-րդ յօդուածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 8-րդ կէտերով, 175-րդ յօդուածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կէտերով եւ 34-329-րդ յօդուածի 1-ին մասով, Վալերի Պերմյակովն ընդունել է առաջադրուած մեղադրանքը:

## Լեռնային Ղարաբաղի Վարչապետ Արա Յարութիւնեանի Այցը Լաս Վէկաս



*Արցախի վարչապետը, պատուիրակութեան անդամները եւ Հնչակեան ներկայացուցիչները Լաս Վէկասի Ցեղասպանութեան Յուշարձանին առջեւ*

Նոյեմբեր 21-ին, Լեռնային Ղարաբաղի վարչապետ Արա Յարութիւնեան այցելութիւն կատարեց Լաս Վեկասի հայ համայնքին: Լաս Վէկասի մէջ Հայաստանի պատուոյ հիւպատոս Ենտի Արմէնեանի հրաւէրով տեղի ունեցած այցելութեան ընթացքին Արցախի վարչապետին կ՚ընկերակցէին Լեռնային Ղարաբաղի մշտական ներկայացուցիչ Ռոպերթ Աւետիսեան եւ Լոս Անճելոսի մէջ հիւպատոս Լեւոն Մինասեան:

Համայնքի ներկայացուցիչները նախ համախմբուեցան Հայկական Ցեղասպանութեան նորակառոյց յուշարձանի մօտ, ուր տեղի ունեցաւ ծաղկեպսակի զետեղման արարողութիւն:

Այլ կազմակերպութիւններու կողքին ներկայ էին, ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ մարմինի անդամներ՝ Կէրի Սինանեան եւ Կարինէ Տէփոյեան, ինչպէս նաեւ Լաս Վեկասի «Հայկ Բժշկեան» մասնաճիւղի ատենապետ Ճորճ Յակոբեան:

Յուշարձանի շուրջ տեղի ունեցած արարողութեան յաջորդեց ընդունելութիւն՝ պատուոյ հիւպատոսութենէն ներս:

Երեկոյան Արցախի վարչապետը ներկայ գտնուեցաւ Լաս Վեկասի Հայոց Եկեղեցւոյ տարեկան ճաշկերոյթին:

## Լոս Անճելոսի Մէջ Նշուեցաւ Լիբանանի Անկախութեան Տօնը



*Գլխաւոր հիւպատոս Ճոնի Իպրահիմ (ձախին) եւ Ընկ. Թաթէոս Քորողլեան*

Կիրակի, Նոյեմբեր 22-ին Փասիֆիք Փալըսէյտի մէջ գտնուող Ռիվիէրա Գանթրի Գլապէն ներս տեղի ունեցած ընդունելութեան մը ընթացքին նշուեցաւ Լիբանանի Անկախութեան Տօնը:

Լոս Անճլոսի մէջ Լիբանանի գլխաւոր հիւպատոս Ճոնի Իպրահիմի հրաւէրով տեղի ունեցած ընդունելութեան ներկայ էին մօտ լիբանանեան տարբեր կազմակերպութիւններու եւ խմբաւորումներու ներկայացուցիչներ:

Ընդունելութեան ներկայացուած էին նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

Հնչակեան Կուսակցութիւնը կը ներկայացնէր Լիբանանեան հարցերու պատասխանատու Ընկ. Թադէոս Քորողլեան:

Հանդիսութեան ընթացքին ելոյթ ունեցաւ հիւպատոս Ճոնի Իպրահիմ, ինչպէս նաեւ գործադրուեցաւ յատուկ յայտագիր:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## ՍՏԱՄԲՈՒԼԻ ՆԱԽԿԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՈՍԿՈՐՆԵՐ ԵՆ ԳՏՆՈՒԵԼ



Ստամպուլի կեդրոնական Թաքսիմ հրապարակում կատարուող վերակառուցման աշխատանքների ընթացքում մարդու գանգի մնացորդներ եւ այլ ոսկրակտորներ են գտնուել: Թուրքական «Haberler.com» լրատուակայքի տեղեկացմամբ՝ ենթադրւում է, որ այդ ոսկորները պատկանում են հայերին, քանի որ այդ տարածքում մինչեւ 1939թ. հայկական գերեզմանոց է եղել, տեղեկացնում է ermenihaber.am-ը:

Հայկական աղբիւրներին յղում կատարող թուրքական կայքն ընդգծում է, որ գերեզմանոցի տարածքը հայկական համայնքին էր տրուել շնորհիւ սուլթան Սուլէյմանի վանեցի խոհարար Մանուկ Քարասեֆերեանի, որը սուլթանին մի անգամ փրկել էր թունաւորուելուց:

1853թ. Օսմանյան սուլթան Աբտուլ Մեջիդի հրամանագրով հայկական գերեզմանոցի շուրջը քարէ պարիսպ էր կառուցուել: Ապա Ֆրանսան եւ Սարդինիայի թագաւորութիւնը (Իտալիան) գնել էին Թաքսիմի շրջանի որոշ հողակտորներ եւ այնտեղ յուղարկաւորել Ղրիմի պատերազմում զոհուած իրենց զինուորներին:

1865թ. Ստամբուլում սկիզբ առած խոլերայի համաճարակը տարածուել էր ոչ միայն ժողովրդի շրջանում, այլ վարակել անգամ որոշ պալատականների: Այդ պատճառով ձմեռային պալատի մօտակայքում գտնուող հայկական գերեզմանոցում հանգուցեալների յուղարկաւորութիւնն արդէն արգելուել էր: Հայերին-յոյներին գերեզմանոցի համար հողատարածք էր յատկացուել Ստամպուլի Շիշլի թաղամասում, որը խիտ բնակեցուած չէր: Այդ գերեզմանոցն օգտագործւում է նաեւ այսօր:

Թաքսիմի հայկական գերեզմանոցի տարածքի մի մասը սուլթան Աբտուլ Ազիզի հրամանով բռնագրաւուել է 1870թ, երբ տարածքում բարեկարգման աշխատանքներ էին իրականացւում: Իսկ ամբողջութեամբ տարածքը օտարուել էր 1939թ.: Իսկ 1940-ին Ստամպուլի նահանգապետ եւ քաղաքապետ Լյութֆի Քըրդարը հաստատել էր գերեզմանոցի տեղում ներկայիս Գեզի զբօսայգու եւ Թաքսիմի տարածքի մի շարք բնակելի շէնքերի կառուցման ծրագիր:

## Հանդիպումը Ղարաբաղի Վարչապետ Հետ

Շարունակուած էջ 1-էն

թիւնը:

Պատասխանելով պատուիրակութեան անդամներու հարցերուն Վարչապետ Յարութիւնեան տեղեկութիւններ փոխանցեց սահմանի վրայ տիրող իրավիճակի մասին, վստահեցնելով որ հայկական զօրքերը միշտ պատրաստ վիճակի մէջ են եւ համարժէք պատասխան կու տան թշնամիի բոլոր ոտնձգութիւններուն:

Կարծիքներու փոխանակութիւն տեղի ունեցաւ նաեւ տարածաշրջանային վերջին զարգացումներուն շուրջ ու շեշտուեցաւ Ամերիկահայութեան դերի կարեւորութիւն՝ Լեռնային Ղարաբաղի անկախութեան ճանաչման ուղղութեամբ:

Ատենապետի կողքին Հնչակեան պատուիրակութեան մաս կը կազմէին Գաբրիէլ Մոլոյեան, Կարինէ Տէփոյեան եւ Տօքթ. Արշակ Գազանճեան:

Նոյն օրը երեկոյեան, հրաւէրովը Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճէլըոսի մէջ Աւագ Հիւպատոս Սէրկէյ Սարգիսովի, տեղի ունեցաւ ընդունելութիւն իր պատիւ Արցախի վարչապետ Արա Յարութիւնեանի եւ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեանի: Հանդիպումին ներկայ էին գաղութի տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ այլ հրաւիրեալներ:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# «Մեզի համար խորհրդարանական համակարգը միշտ եղած է սկզբունքային եւ անհրաժեշտութիւն». Յայտարարեց Ընկ. Յակոբ Տիգրանեան

*ՍԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԸՆԿ. ՅԱԿՈԲ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ,ԱՐԱՐԱՏ» ԿԱՅԱՆԷՆ*



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան «Արարատ» հեռուստատեսութեան «Օրակարգ» հաղորդման տաղավարին մէջ հիւրընկալուելով եւ պատասխանելով լրագրողի հարցումներուն, խօսած է ՍԴՀԿ նորօրեայ դերակատարութեան, Հայաստանի քաղաքական դաշտի, Սուրիոյ իրավիճակի եւ առհասարակ, տարածաշրջանային հարցերու մասին:

Պատասխանելով ՍԴՀԿ կեդրոնական վարչութեան գրասենեակները Սփիւռքէն Հայաստան տեղափոխելու մասին հարցումին, ՍԴՀԿ ատենապետը նշած է, որ այդ մէկը կատարուած է՝ ելլելով նախորդ երկու համագումարներու ընթացքին առնուած որոշումէն, որ կուսակցութիւնը պէտք է դառնայ Հայաստանակեդրոն: «Ինծ համար գոնէ անբացատրելի էր, որ Հնչակեան կուսակցութեան նման կուսակցութիւն մը, որ տասնեակ հազարաւոր նահատակներ տուած է Հայաստանի անկախութեան համար, այսօր, երբ ունինք անկախ հանրապետութիւն, կեդրոնը կը գտնուէր Սփիւռքի մէջ: Կը կարծեմ՝ պէտք է ընդհանուր փակագիծերու մէջ նայինք, որ յետ այսու, բոլոր հայկական կազմակերպութիւնները, ճիշդ կ՛ըլլայ (եւ ճիշդը այդ է), որ իրենց գործունէութիւնը ծաւալեն Հայաստան»:

ՍԴՀԿ ատենապետը խօսած է հայաստանեան քաղաքական դաշտի մէջ գաղափարական կուսակցութիւններու բացակայութեան մասին, որոնց դերակատարութիւնը, քաղաքական առումով նպաստաւոր չէ Հայաստանի քաղաքական գետնի վրայ. «Ես կը կարծեմ՝ այդ առումով, Հնչակեան կուսակցութիւնը որպէս գաղափարական կուսակցութիւն, սկզբունքներ, արժէքներ ներկայացնող կուսակցութիւն, կրնայ օրինակելի դերակատարութիւն ունենալ հայաստանեան քաղաքական դաշտին մէջ: Մենք կ՛ուզենք մաս կազմել Հայաստանի պետականաշինութեան, Հայաստանի քաղաքական առօրեային»,-նշած է Ընկ. Տիգրանեան, աւելցնելով, որ յառաջիկային կ՛ակնկալէն քաղաքական կուսակցութիւններու մաքրագործում, եւ որ անհատ ներկայացնող կուսակցութիւններու ժամանակն անցած է եւ գաղափարական հիմքերով կուսակցութիւններու եւ ոչ՝ անհատապաշտութեամբ առաջնորդուողներու ժամանակն է:

Համաշխարհայնացումը մեծ վտանգ նկատելով ներկայ Սփիւռքին համար, Ընկ. Յակոբ Տիգրանեան նշած է, որ այսօրուան Սփիւռքը կը տարբերի 100 տարի առաջուան Սփիւռքէն: «Մենք յաջողութեամբ անցանք հայապահպանման ճանապարհը, մանաւանդ Ցեղասպանութենէն անմիջապէս ետք եկող 40-50 տարիներուն : Բայց, պէտք է ըսել, որ որոշ ժամանակ մը քայլ չկրցանք պահել այժմէականութեան հետ: Այս մէկը մեզի համար եղաւ խոցելի կէտ մը, որը պէտք է վերատեսութեան ենթարկենք եւ քայլ պահելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկենք: Սփիւռքի մէջ մեր գլխաւոր թշնամին համաշխարհայնացումն է: Այսօր հայը հայ պահելու մարտահրաւէր ունինք, անցեալի միջոցները՝ ակումբներ, մարզական, մշակութային կառոյցներ, այժմէական չեն, քանի որ պայմանները փոխուած են:

Այսօրուան Սփիւռքը նոր ձեւաւորուած Սփիւռք է, նոր գաղութներ կը ձեւաւորին, ուր դժբախտաբար ճիշդ ձեւով դրուած չէ հայապահպանութեան հարցը»,- նշեց է ՍԴՀԿ ատենապետը, աւելցնելով, որ Սփիւռքը պէտք է անցնի միայն կարծիք, տեսակէտ յայտնելու սահմաններէն եւ պէտք է ընդունի, որ Հայաստանն իր օճախն է, ոչ թէ ինք միայն գբօսաշրջիկ կրնայ գալ այստեղ:

Թուրքիոյ հետ Հայաստանի յարաբերութիւններուն մասին խօսելով՝ Ընկ. Յակոբ Տիգրանեան նշած է, որ այսօր երկու երկիրները պատրաստ չեն պետական յարաբերութիւններու: «Կը կարծեմ, որ հայ-թրքական յարաբերութիւները չեն կրնար որեւէ առաջընթաց ունենալ այնքան ատեն, քանի դեռ առկախ է ղարաբաղեան հարցը: Թուրքերը չեն կրնար համաձայնութեան գալ Հայաստանի հետ, այնքան ատեն, որ անոնք ունին պայմանաւորուածութիւններ՝ Ազրպէճանի հետ: Մենք մեր կուսակցութեան վերջին համագումարին որոշում առած էինք, եւ այդ որոշումը ուժի մէջ դրինք, որ պիտի բացուինք առաջադէմ Թուրք խաւին, որ կ՛ընդունի հայոց ցեղասպանութեան փաստը: Այդ առումով տարբեր սեմինարներ կը կազմակերպենք, կը հրաւիրենք տարբեր մարդոց, քննարկումներ տեղի կ՛ունենան: Իսկ պետական յարաբերութիւններէն ներս ես դրական կարգաւորում առայժմ չեմ տեսներ»:

Անդրադառնալով Դեկտեմբեր 6-ին Հայաստանի մէջ անցկացուելիք Սահմանադրական բարեփոխումներու հանրաքուէին՝ ՍԴՀԿ ատենապետ ընկ. Յակոբ Տիգրանեանը դրական գնահատեց բարեփոխումներու նախաձեռնութիւնը, նշելով, որ ՍԴՀԿ-ն արդէն կայացուցած է իր որոշումը՝ բարեփոխումներուն «այո» ըսելով. «Խորհրդարական համակարգը մեզի համար այն հիմնաւորուած համակարգն է, որ մենք կը տեսնենք իբրեւ ժողովրդավարական լաւագոյն համակարգ: Այս մէկը մեր դրոյթներէն է առաջին օրէն: Տակաւին 1890-ին, երբ Գում Գափուչի մէջ առաջին հայկական ցոյցը տեղի ունեցաւ, եւ այն օրին մենք Օսմանեան կայսրութեան պահանջագիր ներկայացուցինք, մեր երրորդ կէտն այն էր, որ Օսմանեան կայսրութեան մէջ պէտք է խորհրդարանական համակարգը վերականգուէր եւ հայ ժողովուրդի իրաւունքները պաշտպանուէին այդ համակարգի միջոցաւ: Մեզի համար խորհրդարանական համակարգը միշտ եղած է սկզբունքային եւ անհրաժեշտութիւն: Հայաստանի մէջ փաստուած իրականութիւն է, որ քսանհինգ տարուան ընթացքին նախագահական կամ կիսանախագահական համակարգը իր պէտք եղած արդիւնքները չտուաւ: Ժամանակն է, որ անցնինք խորհրդարանանական համակարգին: Բնականաբար, փոփոխութիւնները անմիջապէս յաջորդ օրը՝ Դեկտեմբերի 7-ին տեղի պիտի չունենան, բայց մենք այս բարեփոխումներու հանրաքուէով լրջագոյն քայլերէն մէկը կ՛ընենք»:

Հաղորդման ընթացքին անդրադարձ եղած է նաեւ Սուրիոյ հայկական գաղութի մասին: Ընկ. Յակոբ Տիգրանեան, որ նոր վերադարձած է Սուրիայէն, ըսած է, որ Դամասկոսի համայնքը տակաւին կը մնայ պատնէշի վրայ՝ կառչած իր սուրիական հայրենիքին, նշելով, որ 40 տոկոսով, անշուշտ, նուազած է թիւը, ինչ որ էր պատերազմէն առաջ. «Բարոյական գետնի վրայ մենք պարտք ենք Սուրիոյ հայրենիքին, որ ցեղասպանութենէն ետք տեղ տուած է հայերուն, բայց եթէ պիտի նայենք քաղաքական իմաստով, ապա սուրիահայութիւնը այն համայնքն էր, որ սփիւռքի մէջ կը տարբերուէր միւս համայնքներէն, կը պատրաստէր մարդուժ: Կորսնցնելով Սուրիոյ համայնքը, մենք կը կորսնցնենք այդ սիւնը: Բայց կայ նաեւ մարդկային գործօնը, քանի որ մարդիկ կ՛ապրին պատերազմական վիճակի, ընկերային ու տնտեսական ծանր վիճակի մէջ, մենք, որպէս հայութիւն, պարտաւոր ենք ունենալ ծրագիր մը, որ երբ պահը գայ, մենք կը գործադրենք այդ ծրագիրը: Ի հարկէ այսօր այդ վտանգը չկայ, ինչ ամիսներ առաջ, բայց մենք պարտաւոր ենք այդ ծրագիրը միշտ պատրաստ ունենալ»:

**www.massisweekly.com**

Bedros S. Maronian
818/500-9585
Siamanto B. Maronian
818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900
Los Angeles, CA 90048
805 East Broadway
Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500
Pasadena, CA 91101


• Life Insurance
• Health Insurance
• Group & Individual
• Long Term Care
• Disability
• Estate Planning
• Will & Living Trust
• Full Annual Review
• Mortgage Protection
• College Planning
• Workman's Compensation
• Employee Benefits
• Annuity
• IRA
• 401K & 403B
NEW YORK LIFE · Anthem · BlueShield · Aetna · Health Net · CIGNA · KAISER PERMANENTE
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.
Seniors 65 & Up · Medicare Supplements · Insurance · Prescriptions Drugs RX · Benefits

# ՔԱՆԻ ԱՇԽԱՐՀՔԸ ՉԱՐ Է




*ՍԱՐՕ ՍԱՐՈՅԵԱՆ*

Հայաստանեան գործող վարչախմբի մատուցած «Սահմանադրական փոփոխութիւնների» գործընթացը կամաց-կամաց մօտենում է հանգուցալուծմանը: ՀՀ քաղաքացիներին վերապահուած է պասիւ դիտորդի կարգավիճակ, ովքեր լուռ հետեւում են, թէ ինչպէս են «Այո» եւ «Ոչ» քարոզողները քաղաքական պայքար մղում միմեանց դէմ: Պայքար, որը վաղուց չեղուել է իմաստից՝ երեւոյթը բնութագրող եզրոյթը զրկելով բովանդակութիւնից: Եթէ «Այո»-ի ճամբարում գործը յանգել է շուքին եւ սեփական ծրագրերի ֆորմալ ընթացքի ապահովմանը, ապա ընդդիմադիր կուսակցականների շրջանակը՝ «Ոչ»-ի ճամբարը, կրկին աչքի է ընկնում առկայ խնդիրների նկատմամբ իր անլուրջ վերաբերմունքով: Սեփական ակտիւութեան իմաստը տեսնելով «իշխանափոխութիւն» կոչուող մտասեւեռման մէջ՝ ընդդիմադիր միաւորներն արդէն տարիներ ձգուող իրենց «պայքարը» կեանքի են կոչում հանրահաւաքի ու երթի միջոցով՝ յամառօրէն չհասկանալով, որ պայքարը բոլորովին էլ դժգոհութիւն ու բողոք արտայայտելը եւ ամէն րոպէ յանցագործի չար կամ վնասատու լինելն ապացուցելը չէ:

Հայաստանի հանրութեան դէմ գործող վարչախմբի ձեռնարկած «Սահմանադրական փոփոխութիւններ» կոչուող հերթական «խաչակրաց արշաւանքը» կասեցնելու համար ի՞նչ պէտք է եւ ի՞նչ կարող էր անել ընդդիմութիւնը, որ չի արել այս ընթացքում: Այս հարցերը, բնականաբար, ծագում են ընդդիմադիր հանրութիւնը ներկայացնող իւրաքանչիւր քաղաքացու մօտ, երբ ինչ-որ անհատներ, մտահոգութիւն արտայայտելով, քննադատում են ընդդիմադիր միաւորներին:

Քաղաքացիական հանրութեան ներկայացուցիչները, ովքեր իրական պայքարը կեղծից տարբերելու համար իրաւաքաղաքական բաւարար գիտակցութիւն ունեն, տուեալ հարցերի պատասխանները հեշտ են գտնում: Սակայն նոյն այդ պատասխանները դժուար «վերծանելի» են մնում բողոքը, փնթփնթոցը կեանքի դրսեւորման ձեւ դարձրած, առկայ վիճակին խօսքով դէմ գնացող, սակայն վարքով համակերպուող, որեւէ խնդիր լուծելու անընդունակ, անկարող մարդկանց համար:

Հարցերի պատասխանները գտնելու «դռները» մեր մտքերում են: Այդ «դռները» բացելու ցանկութիւնն ու հնարաւորութիւնն է կանխորոշում, թէ մենք ինչ պատասխանների ենք յանգում: Կախուած այն հանգամանքից, թէ մենք ինչ ենք հասկանում Սահմանադրութիւն եզրը արտաբերելիս, հենց այդ մտքի շարժից էլ մեր գիտակցութիւնը դուռ է բացում դէպի մեզ յուզող նշուած հարցերի պատասխանները: Այսպէս՝ որոշ մարդկանց համար Սահմանադրութիւնը պետական մարմինների ու հանրութեան յարաբերութիւնները կարգաւորող, նրանց համար իրաւունքներ ու պարտականութիւններ սահմանող մի փաստաթուղթ է, միւսների համար՝ որոշակի կառավարչական պետական առանձնացուած համակարգերի (իշխանութիւնների) տարանջատմանը ու հաւասարակշռմանը ձգտող ու դրանով հանրութեան շահերին ծառայող փաստաթուղթ, մի այլ խումբ մարդկանց համար՝ ընդամէնը թղթի կտոր, որի վրա գրուած են օբիեկտիւ իրականութիւնից մշտապէս հեռու նորմեր եւ այլն: Նման պատկերացումներից էլ բխում է մեր վերաբերմունքը գործող վարչախմբի ձեռնարկած «Սահմանադրական փոփոխութիւններ» կոչուող գործընթացի նկատմամբ եւ վարքը, թէ ինչպէս ենք մենք փորձում դրա դէմն առնել:

Իհարկէ, իւրաքանչիւր քաղաքացի կարող է ունենալ սուբիեկտիւ համոզմունքներ, պատկերացումներ իրեն վերաբերող կամ յուզող տարբեր երեւոյթների, սկզբունքների մասին եւ, հետեւաբար, դրանք բնութագրող եզրերը մեկնաբանել իւրովի: Եւ գործելով այդ համոզմունքների ու պատկերացումների դիրքերից՝ մերժել «Սահմանադրութիւն» եզրի այն ձեւակերպումը, որն ազդարարում է՝ «Սահմանադրութիւնը պետութեան մէջ գործող քաղաքական սուբիեկտների (սուվէրենների) հանրային պայմանագիրն է»: Սակայն, անգամ մերժելով նման մեկնաբանութիւնը, քաղաքացին ունակ է նկատել, որ ներկայացուած այս սահմանման ու միւս բոլոր սահմանումների տարբերութիւնից է բխում հայաստանեան այն իրականութիւնը, որում մարդիկ միայն ընդունակ են առաջարկել հանրահաւաք ու երթ անցկացնել՝ սեփական բողոքի ձայնը երեւի Աստծուն հասցնելու համար:

Երբ մարդու գիտակցութիւնը չի ընկալում իրեն ի բնէ տրուած ուժը եւ այլոց հետ որպէս անհատ սուբիեկտ յարաբերուելու, պայմանաւորուելու, միմեանց իրաւունքները յարգելու եւ հաւասարութեան հիման վրայ կեանքը կառուցելու հնարաւորութիւնը, ի յայտ են գալիս այլ մարդիկ՝ լինեն օտար, թէ իւրային, ովքեր իրենց պայմանն են կապում եւ իրենց կարգը հաստատում տուեալ երկրում: Ուստի, այսօր քրէաօլիգարխիան ընդամէնը գծում է իր կազմում ընդգրկուած սուբիեկտների յարաբերուելու սահմանները՝ «չմոռանալով» կատարել նաեւ օտար՝ աւելի հզօր սուբիեկտների կամքը այս կամ այն հարցում: Երկրում ովքեր իսկական սուբիեկտներն են, նրանք էլ պայմանաւորւում, կազմում ու ընդունում են իրենց Սահմանադրութիւնը: Եւ քանի որ «դրսում» 21-րդ դարն է, ժողովրդավարութեան ձեւական կողմը պահելու համար գործող վարչախումբը երկրում հանրաքուէի է դնում այդ նոր Սահմանադրութիւնն ու ժողովրդին ասում՝ արի ասա «Այո» կամ «Ոչ»:

Յամառութիւնը դրական յատկանիշ է մարդու համար, եթէ նրա գլուխն ուղղուած չէ անշունչ պատին: Ընդդիմադիր միաւորները, անշուշտ, «Սահմանադրական փոփոխութիւնների» գործընթացը շատ լուրջ են ընդունում, երբ իրենց հերթին ժողովրդին կոչ են անում միահամուռ «Ոչ» ասելով՝ տապալել գործող վարչախմբի ձեռնարկումը: Եթէ ժողովուրդը միահամուռ ոչ ասի, եթէ ընդդիմադիր միաւորները միացեալ ուժերով վերահսկեն, եթէ մի քանի հազար դիտորդ, վստահուած անձ, յանձնաժողովի անդամ, լրագրող ունենան, մի քանի հազար ջլապինդ ու պատուախնդիր մարդ գտնեն, եթէ..., եթէ... ապա գործող վարչախմբի ձեռնարկած հանրաքուէն, իհարկէ, կը տապալուի: Այստեղ խօսք կարող է լինել միայն «եթէ»-ների մասին:

Այսքանից յետոյ մնում է ասել. «Յարգելի՛ս, մի քանի հազարամեակ է սպասում ես Փոքր Մհերին: Լաւ կը լինի «վերադառնաս» 21-րդ դար, որտեղ ցորենը երբեք մասուրի չափ չի լինի, իսկ գարին՝ ընկոյզի: Գարու հատիկն էլ ես դու ցանողը, ցորենի հատիկն էլ: Ինչ ցանես, այն էլ կը հնձես: Այդ «եթէ»-ներդ «Գիւլնազ տատի» հեքիաթների նոր պատումներն են յիշեցնում: Այդ իսկ պատճառով եթէ կարող ես, խնդիր լուծիր անձամբ կամ քո այն շրջանակի հետ միասին, ովքեր կը հաւատան քեզ: Իսկ եթէ յոյսդ այդ «եթէ»-ներն են ու հասարակութեան ինչ-որ շերտերի կամ ընդհանուր ժողովրդի արթնացումը, ուրեմն առ փալանդ ու գնայ էշդ փնտռիր»:

Հայաստանում քաղաքացին երբ սուբիեկտ դառնայ, այն ժամանակ էլ կը կարողանայ ըստ հետապնդած կամ ունեցած արժէքների, սկզբունքների, գիտելիքի, նպատակի, ծրագրերի՝ կնքել հանրային պայմանագիրը (ընդունել Սահմանադրութիւնը) իր նմանների հետ: Սայլը ձիուց առաջ չեն դնում: Առանց հայ մարդու սուբյեկտ դառնալու, առանց անհատ քաղաքացիների սուբիեկտային վարքի, առանց փոքր խմբերի կողմից առանձին խնդիրների հնարամիտ, խելամիտ լուծման, առանց սոցիալական տարբեր շերտերի՝ իրենց իրաւունքների գիտակցման, դրանց համար պայքարելու ցանկութեան, առանց յաջողութիւն արձանագրած որոշակի մեթոդաբանութիւն կիրառելու ու տեխնոլոգիաներ սերտելու, առանց ինչ-ինչ խնդիրներ լուծած գործիչների ի յայտ գալու՝ քաղաքական ակտիւութիւնը որեւէ յաջողութիւն չի կարող ունենալ: Ընդդիմութիւնը ներկայացնող միաւորները հանրութեան մօտ սուբյեկտ լինելու գիտակցումը արմատաւորելու, քաղաքացու ինքնուրոյն պայքարելու ներուժն ու հնարաւորութիւնը ներկայացնելու փոխարէն խօսել ու շարունակում են պնդել իրենց ձեռնարկումներում ժողովրդի մասնակցութեան անհրաժեշտութեան մասին: Իրենց պատկերացումները քաղաքականութեան մասին սահմանափակուած են սեփական սուբիեկտայնութեան մասին գերագնահատանքով: Իսկ երբ այդ սուբիեկտայնութիւնը, իբրեւ հեքիաթի աւարտը ազդարարող երեք խնձոր, ընկնի նրանց ձեռքը, այդ ընդդիմադիր միաւորները կը կնքեն նոյն այն քրէաօլիգարխիկ պայմանագիրը, որը Դեկտեմբերի 6-ին պատրաստւում է հանրութեան մասնակցութիւնն ապահովելու միջոցով ընդունել գործող վարչախումբը: Քանի աշխարհքը չար է, այդպիսին է սուբիեկտային վարքը: Առանց քաղաքացու սուբյեկտ դառնալու՝ նրա շահերը սպասարկող Սահմանադրութիւնն անհեթեթութիւն է:

# ՅՈՅՆ ԴԻՒԱՆԱԳԷՏՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

Նոյեմբերի 18-ին, Յունաստանի նախկին դեսպաններից կազմուած «Դիւանագիտական խմբի» նախաձեռնութեամբ, Աթէնքի «Պատերազմական թանգարանում», տեղի ունեցաւ հանրային քննարկման երեկոյ, «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ՝ 100 ՏԱՐԻ ՅԵՏՈՅ» խորագրով:

Երեկոն վարում էր, նախկին դեսպան Թեմոս Ստոֆորոպուլոսը, որի բացման խօսքից յետոյ բեմ հրաւիրեց Յունաստանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Գագիկ Ղալաչեանը, որ ողջունեց միջոցառման կազմակերպումը:

Այնուհետ օրուայ զեկուցաբերները ներկայացան տարբեր թեմաներով, ըստ հետեւեալի.

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԻՐԵՆՑ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹԵԱՄԲ» թեմայով հանդէս եկաւ Յունաստանի ԱԳՆ ընդհանուր քարտուղարի նախկին տեղակալ՝ Մանոս Մեղալոքոմոնոսը:

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍՊԵԿՏԸ) թեմայով՝ Հայաստանի երրորդ Հանրապետութիւնում Յունաստանի առաջին դեսպան՝ Լէոնիդաս Խրիսանթոպուլոսը: Նա հանգամանօրէն զեկուցեց հայ ժողովրդի ապրած պատմական փորձառութեան՝ 1895-96թ.-ի Համիդեան, 1909 թ.-ի Ատանայի, 1915թ.-ից մինչ- 1922 թ.-ի՝ Մեծ եղեռնի, կոտորածների մասին:

Եւ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ» թեմայով՝ Յունաստանի Յատուկ իրաւախորհրդատուական խորհրդի նախկին պատասխանատու՝ Վասիլիս Պատրոնասը:

Միջոցառման աւարտին հարց ու պատասխանի առիթ տրուեց, որն էլ աւելի բովանդակալից դարձրեց ծրագիրը:

## ՌԱՔԷԼ ՏԻՆՔ. «ԱՅՍՕՐ ԷԼ ԵՆ ՓՈՐՁՈՒՄ ՀՆԱԳՈՅՆ ՄՇԱԿՈՅԹՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼ»



Երէկ մեկնարկեց Հրանտ Տինք հիմնադրամի, Սաբանճը, Բողազիչի եւ Բիլգի համալսարանների հետ համատեղ կազմակերպած «Կործանուած քաղաքակրթութիւն՝ ոչ մահմեդական բնակչութեան ունեցուածքը Օսմանեան Կայսրութեան անկման եւ վաղ հանրապետական ժամանակաշրջանում» խորագրով համաժողովը:

Բացման ելոյթը Ռաքէլ Տինքն իրականացրեց:

Յիշելով 2005թ. համաժողովը՝ նա հետեւեալն ասաց.

Ուղիղ 10 տարի առաջ՝ 2005թ. կայացաւ «Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանի հայերը. գիտական պատասխանատուութիւն եւ ժողովրդավարութիւն» անունը կրող, սակայն «Հայերի համաժողով» անունով յայտնի համաժողովը: Թուրքիայի ամենամեծ Բողազիչի, Բիլգի եւ Սաբանճը համասարանները կազմակերպեցին այս համաժողովը, որը կարելի է բեկումնային համարել Թուրքիայի ժողովրդավարութեան պատմութեան մէջ:

Հեշտ չէր: Այս հաստատութիւնները, դրանց ռեկտորները եւ համաժողովի կազմակերպչական աշխատանքներում տեղ գտած մարդիկ կարող էին «Թուրքիային թիկունքից հարուածող» համարուել: Սրա համար թանկ վճարեցին: Սակայն նրանք ճանապարհ հարթեցին այսօրուայ համար:

Եւ ուղիղ տասը տարի յետոյ՝ Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին, այդ երեք համալսարանների ջանքերով նորից այստեղ ենք»:

Շնորհակալութիւն յայտնելով այս երեք համալսարաններին եւ բոլոր աջակցողներին՝ Ռաքէլ Տինքը շարունակեց.

«Ժողովրդիս կորուստների համար ամէն օր ողբամ՝ քիչ է: Սա ե՛ւ հայերի, ե՛ւ մարդկութեան մեծ կորուստն է: Եթէ նկատել էք, մեր երգերի 95 տոկոսը ողբի պէս է: 1909թ. Ատանայի կոտորածից յետոյ Զապէլ Եսայեանն իր «Աւերակների մէջ» գրքում նշում է, որ դժոխային այդ օրերի խաւարը եւ իրական խորութիւնը անհնար է լիովին հասկանալ: Միգուցէ այդ խորութիւնն ամենաշատը ողբի միջոցով ենք զգում: Ժողովրդական երգերի միջոցով կարողանում ենք հասնել Ատանա, Պինկէոլ, Վան եւ զգալ այդ գեղեցկութիւնների կարօտն ու ոչնչացուած քաղաքակրթութիւնը:

Հրանտ Տինք հիմնադրամում արդէն երկու տարի է, ինչ մի խումբ երիտասարդ փնտռում է Թուրքիայում ոչ մահմեդականների ունեցուածքների մնացորդները, կազմում է հազարաւոր եկեղեցիների, դպրոցների, սինագոգերի ցանկը: Ամենակարեւոր աղբիւրների մէջ ամենից առաջ գանձ որոնողների կայքերն են յայտնւում: Հրանտն ասում էր. «Գետնի տակ հայերի գանձերը որոնողներն ինչքա՞ն նկատեցին գետնի երեսին նրանց ունեցած գանձերը: Փորձը ցոյց է տալիս, որ առհասարակ չնկատեցին»:

Այսօր՝ 100 տարի անց, մենք ինչո՞ւ ենք դեռ անցեալից խօսում այն դէպքում, երբ մեր շուրջը տեսնում ենք նորանոր տառապանքներ, երբ հարիւր հազարաւոր մարդիկ կորցնում են իրենց տները, հայրենիքը, երբ մենք ականատես ենք լինում անմեղ երեխաների դաժան մահուանը, երբ քաղաքակրթութիւնների բախումն աւելի է ահագնանում: Ինչո՞ւ ենք այսքան մեծ կարեւորութիւն տալիս 100 տարի առաջ ոչնչացած մի քաղաքակրթութեան:

Գուցէ մեր երկիրը մինչ այժմ դուրս է մնացել այս քննարկումներից, սակայն մարդ արարածն այդ քննարկումներն արել է ըստ պատշաճի եւ այս համընդհանուր բանաձեւն է զարգացրել. «Մի՛ մոռացիր, յիշեցրու՛, որ այլեւս չկրկնուի»:

«Եւ նրանք, ովքեր մոռանում են, վախենում են ոչ միայն անցեալից, այլ նաեւ ապագայից: Զմոռացուած անցեալը նաեւ ապագայի երաշխիքն է»:

Մի խօսքով՝ հարիւր տարի առաջ այս հողերում, որտեղ բոլորս միասին էինք ապրում, հնագոյն մի քաղաքակրթութիւն է ոչնչացուել: Այսօր էլ են փորձում հնագոյն մշակոյթներ ոչնչացնել:

Այսօր այստեղ ենք, որ ճիշտ հարցադրումներ անենք: Այսօրուայ իրադարձութիւնները եւ դրանց հետեւում գտնուող իրականութիւնն ամբողջովին կարող ենք տեսնել միայն այն դէպքում, եթէ կարողանանք անցեալը ճիշտ փոխանցել: Եւ այդ ժամանակ կարող ենք կանխել չարիքներն ու ասել «այլեւս երբեք»:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻԼԱՏԵԼԻՍՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ



Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած այսօր հերթական միջոցառումն է կազմակերպուել Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտում: Այս անգամ միջազգային ֆիլատելիստական ցուցահանդէսն է, որին իրենց հաւաքածուներն են ներկայացրել աշխարհի շուրջ 5 երկրից 40 մասնակից: Ֆիլատելիայի լեզուով հայոց ցաւի մասին բարձրաձայնելը կարեւորել է Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն Հայկ Դեմոյեանը եւ նշել, որ սա հնարաւորութիւն կ'ընձեռնի նաեւ երիտասարդների մօտ արթնացնել մոռացուած աւանդոյթները: Այնուհետեւ տեղի է ունեցել Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտին նուիրուած երկու նամականիշների մարման արարողութիւնը:




Երկար սպասուած ծրագիրն արդէն իրականութիւն է: Հայոց ցեղասպանութեան թանգարան ինստիտուտում Հայոց եղեռնի 100-րդ տարելիցին նուիրուած կազմակերպուել է 4 օրեայ միջազգային ֆիլատելիստական ցուցահանդէս, որի նպատակն է ֆիլատելիայի միջոցով իրազեկել ցեղասպանութիւնների, դրանց հետեւանքների

Շար.ը էջ 18



Massis Weekly

Volume 35, No. 44 Saturday, November 28, 2015

## PACE Committee Approves New Anti-Armenian Report




YEREVAN -- The Committee on Social Affairs of the Parliamentary Assembly of the Council of Europe (PACE) has adopted a second anti-Armenian report within less than a month, which according to the Deputy Foreign Minister of Armenia, Shavarsh Kocharian solely plays into the hands of the Azerbaijani propaganda machine, and fits into Baku's attempts to flop the Karabakh peace process.

After a report calling on Armenia to withdraw its troops from the "occupied territories," another report was adopted at the PACE Committee's latest session. It is called "Inhabitants of Frontier Regions of Azerbaijan are Deliberately Deprived of Water" referring to Karabakh-located Sarsang Reservoir. The report was prepared by Bosnian MP Milica Markovic, who already managed to visit Azerbaijan twice without visiting Nagorno Karabakh where he could get acquainted with the situation in the Sarsang Reservoir.

"The draft of the report is only a grist for the mill of Azerbaijan's propaganda machine and is in line with the logistics of Baku's policy of undermining the negotiation process, unceasing efforts aimed at escalating the situation along the border between Armenia and Azerbaijan and on the Line of Contact with Nagorno-Karabakh, shifting the discussions on the issue into other formats and constantly voicing criticism addressed at the [the OSCE Minsk Group] Co-Chairs," stated Kocharian.

## Bridget Brink: The United States Has Invested More Than $2 Billion into Armenia's Economy Since 1992



YEREVAN (Arka.am) -- The United States has provided more than $2 billion to Armenia since 1992, Bridget Brink, the U.S. Deputy Assistant Secretary in the Bureau of European and Eurasian Affairs, said Thursday in Yerevan at an annual session of the U.S.-Armenia Intergovernmental Commission for Economic Cooperation.

She said that economic relations with Armenia are very important to the United States and that her country is proud that it makes efforts to help Armenia.

The United States has invested more than $2 billion into Armenia's economy since 1992, she said, expressing confidence that this support might enhance Armenia's welfare.

Brink stressed that the emphasis in relations between the two countries has already shifted from economic assistance to direct investments.

In this context, she welcomed the Vorotan Cascade Hydro Power Plant sale deal, which has become the biggest investments project of the United States in Armenia.

Vorotan Cascade Hydro Power Plant CJSC was sold to the United States' Contour Global Hydro Cascade for $180 million.

The cost price of one KWt hour of the electric power generated by this plant is lowest in Armenia.

Brink expressed hope that her country will make similar large invest-

Continued on page 4

## FM Nalbandian: Nothing Related to Nagorno-Karabakh Can be Settled Without the Consent of its People

YEREVAN -- No question related to the Karabakh conflict settlement can be resolved without the consent of the people of Artsakh, Armenian foreign minister Edward Nalbandian said in an interview with "Aravot" daily in comments on rumors that during his latest visit to Yerevan Russian foreign minister Sergei Lavrov tried to persuade Armenia to hand several regions surrounding the administrative borders of Nagorno-Karabakh back to Azerbaijan.

"I prefer declining comments on reports that have nothing in common with the real state of affairs. Those disseminating such information do not even know what they are talking about.

"At our joint press conference with Russian FM Sergey Lavrov, we addressed the topics we had discussed, including the Nagorno-Karabakh peace process. Russia is one of the OSCE Minsk Group co-chairing countries, and we highly appreciate the efforts Russia and the other co-chairing countries are exerting to find a peaceful settlement of the Nagorno-Karabakh conflict. We hold about ten meetings with the Russian foreign minister - at both the bilateral level and multilateral level – which is natural in the context of our strategic relations. And the press may disseminate information on each meeting and report issues related to the Nagorno-Karabakh peace process had been discussed. And, I should note they can mostly be right. With few exceptions, the issue is always on our agenda. It is natural.

"Another question is when the press is adding other elements to such discussions, referring to sources 'close to the negotiators.' I would not take it for granted. It is difficult to know what sources they can quote as the negotiations are taking place at a high level and in a narrow format.

"I would advise referring to official information in commenting on such issues. The president of the OSCE Minks group c-chairing countries made

Continued on page 3

## Armenian Genocide Documents from Vatican Archives Published in 7-Volume Set



ROME -- On November 21, presentation of unique series of seven-volume set of books by Father Georges-Henri Ruyssen was held in the Pontifical Oriental Institute of Santa Maria Maggiore in Rome. The event was organized by the Embassy of Armenia in the Holy See.

Rector of the Pontifical Oriental Institute David Nazar, founder of the Community of Sant'Egidio Andrea Riccardi, president of the Community of Sant'Egidio Marco Impagliazzo, clergymen of Armenian Apostolic and Catholic churches, representatives of public and political sector, members of Armenian community in Italy were among the participants of the event.

The publication presents all the documents on the Armenian Genocide from the period of the Hamidian massacres till the post-Genocide years of Kemalist rule, which were preserved in the Vatican closed archives, and gives a full picture of all the stages of this crime, from planning to implementation of the genocide.

During his speech Ambassador of Armenia to the Holy See Mikael Minasyan particularly stressed the fact that this seven-volume set is a significant achievement for Genocide studies and is a history which also that of the Turks. "The work by Father Ruyssen helps us to trace back the facts. It helps us to read the past thus learning the lessons for the future."

At the event Ambassador Minasyan handed over to Father Georges-Henri Ruyssen the Order of Honour awarded by the President of Armenia for the development of the Armenian studies and for his significant contribution to dissemination of spiritual values.

## More than a Million Viewers Watch 'Conan In Armenia'




HOLLYWOOD — An average of 1.04M viewers caught TBS' unveiling of Conan In Armenia at 11 PM ET Tuesday, 666K of whom fell into the 18-49 age bracket - both about double what Conan's been averaging recently. Another 317K viewers of all ages watched a replay immediately after the premiere, at 12:30 AM ET, 226K of them in the demo, Deadline.com reports.

When TBS unveiled Conan O'Brien's historic trip to Cuba in March, it logged 1.3 million viewers in its 11 PM ET premiere on Wednesday, after which the network immediately ran it again, posting another 510,000 viewers. That crowd grew to 3.7 million viewers who checked out O'Brien becoming the first American late-night host to do a show in Cuba in more than 50 years. Conan in Armenia likewise is expected to grow.

In the video he has all sorts of merrymaking on his trip to the South Caucasus country where in the streets and marketplaces he tries to use some of the spoken Armenian phrases that he has learned from a language instructor back in Los Angeles.

Besides the usual "Barev" (hello) and "Inchpes es" (how are you?) phrases, those include expressions literally translated as "I eat your liver" and "I die on your body", a way Armenians express their sympathy towards close friends and family.

While in Armenia, O'Brien and Movsesian herded sheep and sampled the local alcoholic beverages, and O'Brien took Movsesian to an Armenia matchmaker — all fodder for O'Brien's trademark sardonic humor. O'Brien also appeared in an Armenian soap opera.

## Global Terrorism Index: Armenia Ranked Among World's Safest Countries




YEREVAN (Armradio.am) -- 2015 Global Terrorism Index published by the Institute for Economics and Peace rates Armenia as one of the safest countries in the world in terms of potential terrorist threats.

Armenia is ranked 116th among 162 countries, where a lower place means less danger in terms of terrorism.

Armenia's neighbors in the region are placed as follows: Georgia – 71th, Turkey – 27th, Azerbaijan – 93rd and Iran – 39th.

Armenia's partners in the Eurasian Economic Union Russia and Belarus are ranked 23rd and 77th respectively, Kazakhstan is 83rd, Kyrgyzstan is 86th.

The Global Terrorism Index provides a detailed analysis of the changing trends in terrorism across 162 countries over the last 15 years. It investigates the patterns of terrorism by geographic activity, methods of attack, organizations involved and national economic and political contexts.

According to the report, the number of lives lost to terrorism increased by 80% in 2014, reaching the highest level ever recorded at 32,658. This compares to 18,111 in 2013. According to the third edition of the Global Terrorism Index (GTI), out today, this increase represents the largest yearly increase in deaths ever recorded. The report also highlights the dramatic rise in terrorism over time, with deaths increasing by nine-fold since the year 2000.

The report, developed by the Institute for Economics and Peace is based on data from the Global Terrorism Database of START.

## Azerbaijan Hands Over Armenian POW to Nagorno-Karabakh

STEPANAKERT -- Azerbaijan has handed over on Wednesday a Karabakh Armenian soldier who was taken prisoner in March after crossing the Armenian-Azerbaijani "line of contact" around Nagorno-Karabakh in still unclear circumstances.



According to the Nagorno Karabakh State Commission on Prisoners of War, Hostages and Missing Persons, Andranik A Grigoryan, a private of the Defense Army, was repatriated on Wednesday afternoon through the mediation of the International Committee of the Red Cross (ICRC). The hand-over took place at the Line of Contact near the village of Bash Garvand in Aghdam.

During his captivity, the ICRC regularly visited him to assess the conditions in which he was held, the treatment he received and to facilitate contact with his family.

## Human Skulls, Bones Found at Istanbul's Former Armenian Cemetery



ISTANBUL -- Human skulls and bones were found during ongoing excavations at Taksim Square in central Istanbul, Zaman newspaper reports. The bones reportedly belong to Armenians, since an Armenian cemetery was situated in the area till 1939.

Suleiman the Magnificent ordered construction of the cemetery when his imperial chef Manuk Karaseferian denounced a group of people trying to poison the Sultan. For almost four hundred years the site formed part of the largest Christian burial ground in Constantinople: the Pangalti Armenian Cemetery.

In 1865, the raging cholera infected not only the general public, but also some courtiers in Istanbul. Armenians were thus banned from burying their dead in the cemetery situated close to the winter palace, an area in Sisli district of Istanbul allocated to the Armenians and Greeks instead.

Sultan Abdulaziz ordered the confiscation of a part of Taksim Armenian cemetery in 1870, with the whole area alienated in 1939.

Governor and Mayor of Istanbul Lutfi Kirdar confirmed the construction of modern-day's Gezi Park and several buildings in 1940.

## Armenia Placed Second in European Team Chess Championship

REYKJAVIK -- The national teams of Russia have completely dominated the 2015 European Team Chess Championships, winning the gold medals in both men's and women's tournaments.

In the final round of the men's section Russia tied the match against Hungary to complete the race with 15 points and take the winner's trophy. This is Russia's first gold in ETCC since 2007.

Armenia beat Georgia 3-1 in the last round, with victories by Levon Aronian and Sergei Movsesian

Two points behind the champions are Armenia, Hungary and France on the shared second place. According to the tie-break, Armenia won the silver medal, while Hungary took the bronze.

The European Team Chess Championships were held from November 12-22, 2015, at the historic Laugardalshöll in Reykjavik, Iceland.

# USAID and Smithsonian Partner to Launch "My Armenia" Project




YEREVAN -- The United States Agency for International Development (USAID) and the Smithsonian Institution have partnered for an innovative project to support cultural sustainability through cultural tourism in Armenia.

The project was launched on Friday, November 20 during an official ceremony at the Matenadaran Scientific Research Institute of Ancient Manuscripts in Yerevan, which holds one of the world's richest collections of medieval manuscripts and books.

At the event, the U.S. Ambassador to Armenia Richard Mills, Jr., Prime Minister Hovik Abrahamyan, and the Senior Advisor of the Smithsonian's Office of International Relations, Halle Butvin delivered remarks. About 100 people attended the event, including Government members, private sector and the tourism industry representatives.

The four-year project, funded by USAID, aims to enhance and increase cultural heritage tourism in the regions outside Armenia's capital Yerevan, through a unique combination of research, scholarship, support for artisan craft, capacity building, and a strong focus on fresh thinking for tourism development.

"The global tourism market continues to grow and cover new destinations. Armenia's rich cultural heritage, unique cuisine, beautiful natural environment and welcoming people make it a special place," said Ambassador Mills. "The purpose of "My Armenia" project is nothing less than to put Armenia on the map as a world-class tourist destination. We intend to not only contribute to the development of the tourism industry in Armenia, but also ensure that the benefits of that growth are widely distributed across the country by promoting tourism to regions outside of Yerevan, thus enhancing the economic prospects of Armenia's rural communities."

The Smithsonian has a long history of working with communities around the world to support efforts in cultural sustainability, whether protecting cultural heritage threatened by human conflict and natural disaster, or supporting the long-term sustainability of diverse cultural sectors.

Through training, programming, community engagement and documentation, and other methods, Smithsonian curators and project staff from across the Institution will work with partners in Armenia to develop new strategies for sustaining cultural heritage.

This project will support traditional arts, crafts and music in the country and lead to greater benefits for rural communities in Armenia, broader awareness about Armenia in international markets, as well as help protect and enhance Armenia's natural and cultural heritage.

"Tourism can be a driver of economic development by generating employment in hotels and restaurants, as well as increasing business for taxi drivers, those making and selling souvenirs, or those providing goods and services to tourism-related businesses," Ambassador Mills said. "However, to spread the wealth generated by tourism, Armenia needs to develop anchor tourism sites outside of Yerevan and link them together in a tourism circuit that spans the length and breadth of the country. This new project will provide technical assistance to develop such a circuit, which will encourage travelers to travel outside of Yerevan and spend more money in the regions. This is just one of the many ways the U.S. Embassy is partnering with the Armenian people to strengthen the economy of Armenia's rural regions."

The Smithsonian has a long history of working with USAID on international programming to support the conservation of biodiversity, museum workforce capacity building, and emerging cultural institutions. Reflecting a renewed partnership between the two organizations established through a 2013 Memorandum of Understanding, the "My Armenia" project signifies a new, collaborative approach to combine the strengths of the two organizations for greater impact.

## Nothing Related to Nagorno-Karabakh

**Continued from page 1**

five statements on a settlement of the Nagorno-Karabakh conflict. They presented the principles underlying a settlement of the Nagorno-Karabakh conflict. A simple comparison would show the press reports do not correspond to the approaches of the co-chairing states' leaders. So what do you think – which is more trustworthy, the statements by the co-chairing countries' presidents or rumors circulated by the press. I do not think there cannot be two options.

"I would also like to add that no issue involving Nagorno-Karabakh can be resolved without Artsakh people's consent."

# Annual Pan-European Phoneton Raises Over 1.3 Million Euros in Donations and Pledges

PARIS -- The annual Pan-European Phoneathon of the Armenian Fund, headed by the it's French affiliate, has raised over 1.3 million euros in donations and pledges.




The large-scale fundraising campaign, held during November 18-22, mobilized the Armenian communities of France (1,205,569 euros), Germany (76,050 euros) and Switzerland (24,554 euros). Proceeds from the Phoneathon will be used to build community centers in Nagorno Karabakh, expand agricultural-development projects in Armenia's Tavush Region, and provide assistance to Armenian refugees from Syria and Iraq.

The Greek community traditionally joined the Phoneathon with their fundraising held in Greece on November 22. The phoneathon raised around 29,000 euros, which will be used for the construction of a kindergarten in Karin Tak, a village in Nagorno Karabakh's Shushi region.

Following the terrorist attacks in Paris on November 13, the fund's French affiliate stated: "Today France, our country, lies wounded after being assailed at the hands of barbarians. We are in mourning. Many of the children of our own nation, which was subjected to similar atrocities in 1915, are now being forced out of their native communities in Syria and Iraq and once again taking the road of exile. The November 13 attacks in Paris were a blow to a civilization built on compassion, respect for human dignity, tolerance, and freedom. Armenia and Nagorno Karabakh are part of a civilization that shares those very same values. We must, therefore, safeguard the borders of the twin Armenian republics, and also support the tens of thousands of Armenians who need our urgent assistance. As agreed by Mayor Anne Hidalgo and Patrick Devedjian, the godmother and godfather of our Phoneathon, we will carry the event through, exactly as planned. The words 'You don't scare us,' which are emblazoned on buildings at Paris, fully reflect our stance."

The Phoneathon was preceded by an opening Gala Dinner on November 12, held at the Paris City Hall under the auspices of Mayor Anne Hidalgo.

In the course of the Phoneathon, more than 600 volunteers stationed in Paris, Marseille, Toulouse, and Lyon will called some 50,000 households, businesses, and organizations in France, Germany, and Switzerland to request their support. Armenian Fund's other affiliates in Europe - including those of Britain, Austria, the Netherlands, Sweden, Romania - as well as Cyprus are organizing their own fundraising events in the run-up to the fund's Thanksgiving Day Telethon on November 26.




**Paris: SDHP Nazarpek Youth organization members volunteering at Pan-European Phoneathon**

## Armenia Plans to Open Cyber Security Center

YEREVAN. - A center of cyber security is planned to be opened in Armenia in spring 2016. Arsen Taroyan, director of Yerevan Computer Research and Development Institute (YCRDI) told the aforementioned to Armenian News – NEWS.am.

The founder of the center will be YCRDI, which will be backed by a number of state authorities. The center will be located in the territory of "Mars" factory within "Alliance" free economic zone (FEZ). But the center will neither become an FEZ resident nor request tax exemptions. "It will function as a non-profit foundation," Taroyan said.

The center will work in 4 key directions: education and re-qualification, own developments and incubator for beginning developers.

"The developments will relate to the program insurance of the entire security complex of computer system," Taroyan said.

## Prime Minister of NKR Visits Armenian Community in Las Vegas



**SDHP representatives with NK prime Minister Arayik Harutyunyan at Las Vegas Genocide Memorial**

LAS VEGAS, NV -- Prime Minister of the Nagorno-Karabakh Republic, Arayik Harutyunyan visited the Armenian-American community of Las Vegas on November 21st and was welcomed by Honorary Consul of Armenia in Las Vegas Adroushan Andy Armenian, NKR Permanent Representative in Washington DC, Robert Avetisyan, and Consul Levon Minasyan from the Consulate General of Armenia in Los Angeles.

Community leaders all gathered at the newly dedicated Armenian Genocide Memorial Monument at Sunset Park, where the Prime Minister and Community leaders placed flowers and wreaths at the Armenian Genocide Memorial.

Among the attendees were Social Democrat Hunchakian Party Western USA Executive Board members Mr. Garry Sinanian and Mrs. Garine Depoyan, accompanied by S.D. Hunchakian Party of Las Vegas "Haig Pejishgian" Chapter's Chairman, Mr. George Hagopyan, along with members of the S.D.H.P representing various chapters. The Ceremony was followed by a reception at the Honorary Consulate of Armenia in Las Vegas,where Assemblymembers Victoria Seaman and Stephen Silberkraus were present.

The day long ceremonies concluded at the Armenian Apostolic Church of Las Vegas' annual banquet.

## Popular Armenian Actress Varduhi Varderesian Passes Away Aged 87

YEREVAN -- Popular Armenian actress Varduhi Varderesian passed away on November 24 at the age of 87, according to a report by Armenian Culture Ministry.

Varderesian was born in Bucharest, Romania, in 1928. In 1946 she repatriated to Armenia, where she studied at the studio of Leninakan Dramatical Theater (now Gyumri). She later worked in the same theater. From 1958 onwards, Varderesian was a leading actress at the Sundukian Drama Theatre of Yerevan.

In 1988,Varderesian won the People's Artist of the USSR title, she received the Movses Khorenatsi medal in 1995 and the Mesrop Mashtots order in 2013. In 2002, Varderesian was declared an honorary resident of Yerevan.



Varderesian's filmography includes parts in more than a dozen and a half movies that made her popular also among broad audiences.

A government commission will be set up for organization of the funeral of the actress.

## Armenia's MIKA Placed Second in Junior Eurovision Song Contest

SOFIA -- Malta won the thirteenth edition of the Junior Eurovision Song Contest, which was held at the Arena Armeec hall in the Bulgarian capital of Sofia on Saturday evening.

Destiny Chukunyere performing the song "Not My Soul!" won with 185 points, finishing nine points ahead of the second-placed MIKA from Armenia performing "Love" song. Slovenia took the third place.

A total of seventeen countries participated in this year's edition of the song contest.

Armenia received maximum 12 points from Georgia, the Netherlands and Belarus.

This is the second victory for Malta in the past three years after the country had won in 2013.

## Lark Musical Society Raised $200,000 at Annual Fundraiser

### Event Honored Philanthropists Joe and Joyce Stein



**L-R State Assemblymember Adrin Nazarian, Joe and Joyce Philibosian Stein, LA City Councilmember Paul Krekorian**

GLENDALE -- The Lark Musical Society raised approximately $200,000 at its annual fundraising dinner held recently at the Jonathan Club in downtown Los Angeles honoring philanthropists Joe and Joyce Philibosian Stein. Lark is gathering funds to convert a 4,000 sq. ft. building into the Armenian Cultural Museum where Armenian culture and its rich history, heritage, and the arts will be celebrated. The museum will showcase themed lectures and exhibit original Armenian historical documents and treasures that go back hundreds of years. The goal is to raise $2.5 million to make the museum a reality.

"We were delighted to have honored Joe and Joyce Stein who are true humanitarians, having raised millions of dollars for scholarships for Armenian students and for supporting the arts and music," said Lark Chairman of the Board Andy Torosyan. "We thank all those who attended our annual fundraiser and for contributing to Lark's dream of an Armenian Cultural Museum."

On display at the fundraising event were nine traditional Armenian costumes, each representing a different village. The event also featured one of a very few known inscribed Armenian Orphan Rugs, woven by orphans of the genocide about a century ago. Among the less than 20-recorded Orphan rugs currently in existence in various museums and private collections, only 5 contain inscriptions woven directly into the rug.

The roughly 6-foot-by-4-foot rug is composed of over a half million hand-tied knots and inscribed to someone who aided the Armenian orphans in Ghazir, Syria after the genocide by the Ottoman Turks in 1915. This rug is currently owned by Mr. Torosyan and will eventually be on permanent display at Lark's Armenian Cultural Museum in Glendale. The rug shall serve as a symbol of survival and a civilized way of life.

Lark Musical Society is a non-profit organization based in Glendale. Lark has actively served the community since 1994 by delivering the highest quality education in classical music to thousands of children, bringing to life hundreds of world class performances, commissioning dozens of world premiere musical works based on Armenian themes and publishing over thirty musical treatises. Lark is one of the most active organizations in the Diaspora working to preserve and enrich the Armenian culture.

To commemorate the centennial of the Armenian Genocide, Lark embarked on a journey to bring 100 events to the community, demonstrating the rebirth of a nation that survived Genocide. Lark has brought to life 90 events to date which included Ian Krouse's Armenian Requiem, Serj Tankian's 100 Years Symphony, Tigran Mansourian's Requiem, and four nights of the beloved Anoush Opera.

Lark aims to make Glendale a destination for all lovers of Armenian culture by bringing to life a cultural museum in the heart of the Armenian Diaspora. It will also be a place for non-Armenian neighbors to learn more about Armenian culture, traditions and the arts. For more information please contact Lark Musical Society at 818-500-999, or visit http://www.larkmusicalsociety.com.

## United States Has Invested More Than $2 Billion

**Continued from page 1**

ments also in the future and added that her country's government along with Armenian authorities will make every effort to promote American investments in Armenia.

She stressed that as a rule investments are made in the predictable and transparent businesses. It means Armenia should root out corruption and remove other obstacles, she said.

The U.S. official also reminded to the session participants that the United States simplified visa regime for Armenian citizens in January 2015, and now they can get 10-year entry visas.

Vache Gabrielyan, the Armenian vice-premier and the international economic integration and reforms minister, who spoke at the session as well, said that the activity of the U.S.-Armenia Intergovernmental Commission is one of mechanisms designed for expansion of trade and economic relations between the two countries.

## ՌՈՍԼԻՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՆՈՐ ՑՈՒՑԱՍՐԱՀԻ ԲԱՑՈՒՄԸ



Ամերիկահայ ծանօթ նկարչուհի Սիրուն Երէցեանի նոր ցուցասրահի Roslin Art Gallery բացումը կատարուեցաւ անցեալ Շաբաթ Նոյեմբերի 21ին, 2015: Արդարեւ, Կլենտէյլի կեդրոնը (415 E. Broadway) Ապրիլ գրատան կից տեղափոխուած սրահը եկած էր արուեստասէր ընտրանի հասարակութիւն մը, մօտն ծանօթանալու հայրենի եւ սփիւռքահայ շնորհալի եւ տաղանդաւոր նկարիչներու ստեղծագործութեանց:

Նշենք նաեւ որ անցնող քսան տարիներու ընթացքին Ռոսլին արուեստի պատկերասրահէն ներս ցուցադրուած են բազմահարիւր հայ արուեստագէններու գործեր եւ հազարաւոր ստեղծագործութիւններ վաճառուած են, որոնք ներկայիս մաս կը կազմեն աշխարհի տարբեր երկիրներու անհատական հաւաքածոներուն: Արդէն ցուցասրահի կարգախօսն է ծանօթացնել հայ արուեստը տեղացի եւ օտար հասարակութեան:

Շրջելով նորաբաց պատկերասրահը այցելուն կը ծանօթանայ հայ դասական եւ ժամանակակից նկարիչներու երանգապնակի արտադրութիւններուն: Հետաքրքրական գործեր են Էմիլ Գազազի «Նոր Աշխարհ»ը, Ռազմիկ Սամուէլի «Էթիւտ»ը, ինչպէս նաեւ Ռոպէր Էլիբեկեանի «Պալանս»ը: Տարբեր բնոյթի գործեր են Արամ Վարդանովիչի սուրբ գրային նիւթերով մանրանկարչական ստեղծագործութիւնները: Ուշագրաւ էին Վարդան Ասատուրեանի «Փորձութիւն»ն ու Մինաս Աւետիսեանի, Փոլ Կիրակոսեանի, Էլիբեկեան ընտանիքի, Յակոբ Յակոբեանի, Արթօ Չագմագճեանի, Վազգէն Մաթեանի եւ այլոց գործերը:

Ինքնուրոյն եւ բազմաշնորհ արուեստագէտ մըն է նաեւ Վահէ Պէրպէրեանը, որուն մռայլ գոյներով փոքրածաւալ նկարները արգասիքն են իր ներաշխարհի տուայտանքներուն:



Տիտանային գործ մըն է Սիրուն Երէցեանի լայնապաստառ ստեղծագործութիւնը «Դիտարկող Աչքեր», ուր կը տեսնուին տասնեակ մը դիմակաւոր գլուխներ, որոնց ետին կան մարդկային տարբեր նկարագիրներով դիտարկող աչքեր...: Սիրունի մէկ այլ ինքնատիպ գործն է «Կենաց Ծառը»: Սակայն Սիրուն անուանի դարձած է իր ծաղկազարդ եւ թռչնագիր ճոխ զարդարանքներով: Իր ներշնչումի բուն աղբիւրը եղած է 13 դարու Կիլիկիոյ հայ անուանի մանրանկարիչ Թորոս Ռոսլինը, որուն լուսանցքազարդերն ու չորս աւետարանիչներու մանրանկարները՝ հայ մանրանկարչութիւնը հասցուցած են իր գագաթնակէտին: Ճիշդ այս պատճառով ալ սիրուն Երէցեանի ցուցասրահը վերանուանուած է «Ռոսլին» անունով:

Մեզի համար ցաւալի էր նշմարել որ ցուցահանդէսի բացման օրը Սիրուն Էրեցեան, սայլակի վրայ նստած եւ խօսելու կարողութենէն զրկուած, հիւանդ վիճակով եւ ներքին անբացատրելի գոհունակութեամբ մը կը հետեւէր այցելուներուն...:

Այս առթիւ մեր գնահատանքը կ'երթայ սոյն ցուցահանդէսը կազմակերպող արուեստագիտուհիի որդիին Առնօ Երէցեանին, որ Ապրիլ գրատան յարակից բաժինը միանցելով իր գրատան, զայն վերածած է մնայուն պատկերասրահի:

Կը շնորհաւորենք մայր եւ որդի Սիրուն եւ Առնօ Երէցեանները մաղթելով նորանոր յաջողութիւններ թէ Ռոսլին ցուցասրահին եւ թէ անոր անբաժան Ապրիլ գրատան:

Գ. ՄՈԼՈՅԵԱՆ

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

## ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՒԱՐՏԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՒ ԿԼԵՆՏԷՅԼ ԷԴՎԵՆԹԻՍԹԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆԻ ՄԷՋ



Հայաստան Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան Շրջանն ու Կլէնտէյլ Էտվէնթիսթ Բժշկական Կեդրոնը յաջողութեամբ աւարտեցին իրենց բժշկական առաջին առաքելութիւնը 435 մասնագէտներու մասնակցութեամբ, որ կայացաւ Հայաստանի հիւսիս-արեւելեան Տաւուշի Մարզի Նոյեմբերեանի Հիւանդանոցին մէջ:

Սոյն առաքելութիւնը արդիւնքն է Հայաստան Համահայկական Հիմնադրամի եւ Կլէնտէյլ Էտվէնթիսթի գործակցութեան, որ կը միտի ստեղծել Կլէնտէյլ Էտվէնթիսթի եւ Նոյեմբերեանի Հիւանդանոցին միջեւ քոյր-հիւանդանոցային յարաբերութիւն մը:

Հոկտեմբեր 17-23-ին տեղի ունեցած առաքելութեան նպատակն էր բժշկական անվճար ծառայութիւններ, ներառեալ վիրահատութիւններ, մատուցանել Նոյեմբերեան քաղաքի եւ շրջակայ 30 գիւղերու բնակչութեան: Առաքելութիւնը Կլէնտէյլ Էտվէնթիսթի կամաւոր աշխատակազմին եւ բժիշկներուն, վիրաբուժներուն ու հիւանդապահներուն համար նաեւ առիթ մըն էր Հայաստան Համահայկական Հիմնադրամի ու Կլէնտէյլ Էտվէնթիսթի երկարաժամկէտ գործակցութեան հիմերը դնելու: Այս տարուայ Մայիսին, երկու կազմակերպութիւններու ներկայացուցիչները Նոյեմբերեանի Հիւանդանոցը այցելեցին եւ կարիքներու գնահատական մը պատրաստելու եւ Հոկտեմբերի առաքելութիւնը ծրագրելու համար:

Կլէնտէյլ Էտվէնթիսթի նախագահ եւ գլխաւոր գործադիր տնօրէն Քէվին Ռապըրթսի ղեկավարութեամբ, Կլէնտէյլ Էտվէնթիսթի 31 անդամնոց բժշկական կազմը առաքելութեան ընթացքին կատարեց 35 վիրահատութիւններ, ներառեալ դիմային վերականգնման, երակալայնացման դարմամնման, լեղապարկի հեռացման, եւ ճողխացման (hernia) վերաբերող գործողութիւններ: Իր տարողութեամբ ու դրական արդիւնքով, առաքելութիւնը աննախընթաց է Հայաստանի պատմութեան մէջ, յատկապէս սահմանամերձ շրջանի մը հիւանդանոցին համար: Կլէնտէյլ Էտվէնթիսթի վիրաբուժական աշխատակազմը, որ կը ներառնէր երեք վիրաբոյժ, երկու թմրաբան, վիրահատային օգնականներ, հիւանդապահներ, եւ կենսաբժշկական ճարտարագէտ մը, երկար ժամեր աշխատեցաւ եւ վիրահատութիւնները կատարելու համար:

«Հայաստան գացինք եւ բժշկական անհրաժեշտ խնամքի համար նիւթական միջոցներ չունեցող անհատներու օգնութիւն տրամադրելու համար, յայտնեց Բժ. Սիմոն Քէօշկէրեանը: Որպէս սփիւռքահայ, կը կարծեմ, որ մեր ազգային ժառանգի կենսունակութիւնն ու բարգաւաճումը երաշխաւորելը կը նշանակէ ընել ամէն ինչ, որպէսզի Հայաստան ապրող մեր հայրենակիցները ըլլան քաջառողջ եւ ունենան բոլոր հնարաւորութիւնները եւ բարգաւաճելու համար»:

Ջրիաբար վիրաբուժուեցան դիմային բնածին թերութիւններ ունեցող երեխաներ: Ծողուածքով տառապող երկրագործներ ու այլ գիւղատնտեսներ կարողացան բուժուած՝ աշխատանքի վերադառնալ, շնորհիւ Կլէնտէյլ Էտվէնթիսթի վիրաբուժներուն կատարած բազմաթիւ գործողութիւններուն: «Շարք մը վիրահատութիւններ կատարեցի եւ բերնի ու վզի ուռեցքներու եւ բերանային խեղուածքի վերաբերեալ, ինչպէս նաեւ վիրահետքերու ուղղման համար», յայտնեց Բժ. Արմոնդ Կոտիկեանը: «Ունէինք հիւանդներ եւ տասը ամսական մանուկներէ մինչեւ տարեցներ: Հիւանդներուն կէսը հինգ տարեկանէն վար էր: Երբեք չեմ մոռնար երախտապարտ դէմքերը այն ընտանիքներուն, որոնց երեխաները վիրահատութիւններուն շնորհիւ վերջապէս կարողացան բնականոն կերպով ուտել ու խմել»:

Բացի վիրահատութիւններէն, տարրական խնամք մատուցանող ինչպէս եւ մասնագէտ տասը բժիշկները ծրագրուածէն կրկնակի թիւով հիւանդներ քննեցին, դարմանեցին, եւ ձրի դեղեր տրամադրեցին անոնց, առաքելութեան երեխայ թէ չափահաս նպաստընկալներու գումարը հասցնելով գրեթէ 800-ի: Ներքին հիւանդութիւններու, սրտային, թոքային, ջղային, եւ մանկական հիւանդութիւններու վերաբերեալ դարմանումները յատկապէս բարձր գնահատուեցան Նոյեմբերեանի բնակչութեան կողմէ:

«Մենք Աստուծոյ կոչը լսեցինք» Անոր սէրը բաժնել միտող մեր հիւանդանոցի առաքելութիւնը Նոյեմբերեան բերելով», յայտնեց Քէվին Ռապըրթսը: «Աստուած հետեւաբար մեր ծառայութիւնը օրհնեց» մեզի շնորհելով ապահովու-

Շար.ը էջ 19

# ԼԷՈՆԻԴ ԱԶԳԱԼԴԵԱՆԸ ԿԸ ԴԱՌՆԱՐ 73 ՏԱՐԵԿԱՆ




*Բարձրակարգ գիտնականն ու հայրենանուէր մտաւորականն արցախեան շարժման տարիներին ազատատենչութեան բնատուր մղումով դարձել էր նաեւ ինքնուս ռազմական գործիչ: Հայոց ոգին էր, որ խտացաւ եւ անպարտելի ուժ դարձաւ իր իսկ ստեղծած «Անկախութեան բանակ» եւ «Ազատագրական բանակ» ռազմական զոյգ կառոյցներում: Լէոնիդ Ազգալդեանը արժանապատուօրէն իրագործեց նախասահմանուած իր բաժին գործն ու կնքեց մահականացուն, երբ 50 տարեկան էր: Դա 1991 Թուականի Յունիսի 21-ն էր: Վաղը՝ Նոյեմբերի 22-ին նրա ծննդեան օրն է: Լէոնիդ Ազգալդեանը կը դառնար 73 տարեկան: «Մեծ մարդկանց աճիւններից է վեր յառնում հայրենիքը ու պիղծ են նրանց մոռացողները»,- ասում էր Գարեգին Նժդեհը: Ազգալդեանի մարտական ընկերներն իրենց յիշողութիւններով փորձում են ամբողջացնել գիտակցուած հայրենասիրութեամբ օժտուած «անժպիտ»*



*հերոսի ոդիսականը:*

*«Սա Հայաստանն է եւ վերջ», ահա այսքան կտրուկ, այսքան վճռական էր նրա խօսքն ու կեցուածքը, որը եւ նուիրեալ գործ դարձրեց: Առաջիններից էր, որ հասկացաւ՝ պատերազմը անխուսափելի է, եւ Արցախը ոչ ոք հենց այնպէս չի վերադարձնի, եթէ չազատագրենք: Հենց այդ ժամանակ էլ հեռացաւ հարթակում կուրծք ծեծողներից ու ֆիզիկոսի իր գիտելիքները որոշեց ներդնել աւելի լուրջ գործերի մէջ:*

*Աւելի ուշ ղեկավարում էր Աշոտ Նաւասարդեան նախաձեռնութեամբ ստեղծուած «Անկախութեան բանակը», այնուհետեւ իր իսկ նախաձեռնութեամբ կազմաւորուած «Ազատագրական բանակի անփոփոխ ղեկավարն էր մինչ» զոհուելը: Անթերի ղեկավարելով յաղթանակով աւարտուած 27 ռազմական գործողութիւն՝ նա օտարի տիրապետութիւնից ազատագրեց հայկական հողերը: Խստապահանջ, կարգապահ, ամէնօրեայ չափազանց դժուար զօրավարժութիւնների շնորհիւ մարտական լուրջ պատրաստուածութիւն ձեռք բերող նրա մարտիկները առաջինն էին դադարել ֆիդայի լինելուց ու դարձել իսկական զինուոր»,- յիշում է Լէոնիդ Ազգալդեանի մարտական ընկերը՝ «Կարին» ազգագրական համոյթի ղեկավար Գագիկ Գինոսեանը:*

*«Ինչպէս Զանգեզուրի համար ենք պարտական Նժդեհին, այնպէս էլ ազգային գաղափարի անմնացորդ նուիրեալ Լէոնիդին ենք պարտական Քելբաջարի ամբողջ տարածքի ազատագրման համար»,- բազմիցս նշել ու այսօր շարունակում է կրկնել նրա մարտական ընկերը: Լէոնիդ Ազգալդեանը երկար ժամանակ Շահումեանում ու Մարտակերտում ապրող տասնեակ հազարաւոր հայ մարդկանց յոյսն ու հաւատն է եղել: Իր ողջ ռազմական գործունէութեան ընթացքում 27 ռազմական գործողութիւն է ծրագրել «իրագործել, նուազագոյն կորուստներով: «Նրա կենդանութեան օրօք ազատագրական բանակն ունեցել է ընդամէնը վեց զոհ»,-արձանագրում է Գագիկ Գինոսեանն ու յաւելում. Ազգալդեանի համար չափազանց թանկ էր իւրաքանչիւր զինուորի կեանքը:*

*Գեներալ Արկադի Տէր Թադեւոսեանը Ազգալդեանի մասին մի առիթով ասել էր.«Երբ նոր էինք ծանօթացել, ես համոզուած էի, որ գործ ունեմ լուրջ ռազմական կրթութիւն ստացած անձնաւորութեան հետ, իսկ իրականում Լէոնիդը լազերային ֆիզիկայի մասնագէտ էր, գիտնական, ում ռազմական գործիչ էր դարձրել միայն ու միայն արցախեան պատերազմը, չնայեած մինչ մարտի դաշտում յայտնուելն էլ Երեւանի ֆիզիկայի ինստիտուտում բարձրակարգ գիտնականն իր բուն մասնագիտութիւնը եւս լիուլի ծառայեցրել էր ու շարունակում էր ծառայեցնել հայոց բանակին:*

*Գիտնականի ուշիմութիւնն ու բծախնդրութիւնը ակնյայտ էր նաեւ նրա ռազմական ձեռագրում:*

*«Լէոնիդ Ազգալդեանին երբեւէ ճանաչած, նրա հետ շփուած բոլոր ընկեր, ծանօթ եւ բարեկամները մի շատ էական բանում միաբերան համակարծիք են. օժտուած լինելով անբացատրելի բնատուր տաղանդով, նա մշտապէս եւ ամէնուրեք առաջնորդ էր, անվիճելի գերազանցութիւն»:*

*Մարտական ընկերները նաեւ նշում են, որ նրա յայտնուած միջավայրում միշտ մարդկային բարձրաժէք մթնոլորտ էր ձեւաւորւում: Կարողանում էր աննկատելիօրէն գործի դնել մարդկանց, « Նրանցից ամէն մէկն իր ոլորտում միանգամայն գործուն ու պատասխանատու էր դառնում: «Նրա ստեղծած բանակն ու զինւորը կատարեալ էին, դա ոչնչի հետ համեմատել չի կարելի:*

*Ինչպէս յիշեց Գինոսեանը, երբ արտասահմանցի լրագրողներից մէկը հարցազրոյցի ընթացքում հարցրել է ՝ «ինչ գոյն ունէք» (ասել է թէ՝ որ կուսակցութեանն էք պատկանում), հրամանատարը ծնկի է եկել, մի բուռ հող է վերցրել ու ասել.«Ահա իմ գոյնը»: Լէոնիդ Ազգալդեանի զինակից ընկերը համոզուած է, որ այսօրուայ սերնդից դեռ ծնուելու են «Մի քիչ մոնթեներ, մի քիչ լէոնիդներ, մի քիչ նժդեհներ, մի քիչ..», ովքեր յաղթելու են գալիք պատերազմներում: Սակայն այսօրուայ սերունդը դեռ իր հերոսներին արժեւորելու խնդիր ունի:*

*****

*Ֆիզիկոս, ռազմական գործիչ, Արցախեան ազատամարտի հերոս Լէոնիդ Ազգալդեանը ծնուել է 1942 Թուականին Թիֆլիսում: 1947 - 1959 թթ. սովորել է Երեւանի Ա. Մռաւեանի անուան դպրոցում: 1960 թ. ընդունուել է Մոսկուայի Լոմոնոսովի անուան համալսարանի ֆիզիկայի ֆակուլտէտ, որտեղից յետագայում տեղափոխուել է Երեւանի պետական համալսարանի համապատասխան ֆակուլտէտը « այն փայլուն աւարտել է ռադիոֆիզիկամասնագիտութեամբ: Աշխատել է ժողովրդական տնտեսութեան տարբեր բնագաւառներում, զբաղուել է պլանաւորման մեթոդաբա-*

*Շար.ը էջ 18*

# Ո՞Ր ՀԱՅ ԵՐԵԽԱՅԻ ԴՊՐՈՑՆ ԷՔ ՅԱՆՁՆՈՒՄ ԹՇՆԱՄՈՒՆ

***ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ***
***«Արարատ» հիմնադրամի թղթակից***

*Ժամը հինգն անց դուրս ենք գալիս դպրոցից. ուսումնական հաստատութիւններում ընդունուած ժամերից երկար մնալ միշտ սիրել եմ. այնպիսի զգացողութիւն է, թէ այդ ժամերին աւելի լաւ եմ գիտելիք ստանում ու տալիս: Ուսանող տարիներիս միշտ մինչեւ երեկոյ էի մնում ընթերցասրահում: Հիմա, երբ որ Քարվաճառում դասերից յետոյ երեխաների հետ անգլերէն եմ պարապում, պարապունքները ժամը հինգին, հինգ անց ենք վերջացնում:*

*Պարապունքից յետոյ մի հաճելի յոգնութեամբ երեխաների հետ քայլում եմ դէպի տուն: Երեխաների հետ աշխատելուց յետոյ յոգնածութիւնը լուսաւոր է, չի տապալում, այլ ուժ է տալիս՝ յաջորդ օրուայ համար. քանի որ երեխաների հետ աշխատելը հենց յաջորդ օրուայ գաղափարն է:*

*Քայլում ենք դէպի վեր, ու հերթով հրաժեշտ եմ տալիս երեխաներին, մեր տունն ամենահեռուն է: Ճանապարհին երկու նոր կառուցուող տուն ենք տեսնում. երեխաներն ասում են, թէ ում տներն են ու հետն էլ ուրախութիւն արտայայտում. Թող շատ կառուցուեն տներ, թող բոլոր աւերակները տներ դառնան:*

*Քարվաճառի այսօրուայ դպրոցականների մեծ մասը ծնուել է Քարվաճառում: Քարվաճառում է անցնում նրանց մանկութիւնն ու պատանեկութիւնը, նրանք այստեղ են դպրոց գնում, ընկերներ ձեռք բերում, առաջին անգամ սիրահարւում: Քարվաճառում ապրելը նրանց համար սովորական է, բնական, շնչելու չափ պարզ: Քարվաճառը նրանց հայրենիքն է: Նրանք այս հարցի հետ կապուած նախապաշարումներ չունեն. դա նրանց համար ո՛չ հերոսութիւն է, ինչպէս որոշ մեծահասակներ են մտածում, ո՛չ էլ հիմարութիւն, ինչպէս մեծահասակների մեծ մասն է կարծում Սա նրանց տունն է, որտեղ նրանք ծնուել են ու մեծանում են:*

*Քայլում եմ հեռս դեռեւս եկող մի աշակերտի հետ, ում տունն ամենամօտն է մեր տնից ու ում ամենավերջում եմ հրաժեշտ տալիս: Մի քանի օրից, Նոյեմբերի 25-ին, Մոնթէի ծննդեան օրն է. այդ առթիւ դպրոցականների համար շարադրութիւնների մրցոյթ եմ յայտարարել «Ես ապրում եմ Մոնթէի ազատագրած հողում» վերնագրով: Մոնթէից ենք խօսում. ասում է՝ հերոս է եղել, չէ՞: Ասում եմ՝ հա: Ասում է՝ էս հողն իր արեան գինն ունի, չէ՞: Ասում եմ՝ հա: Ու հասնում ենք իրենց տան մօտ, հրաժեշտ եմ տալիս ու շարունակում քայլել: Ճիշտ ես, աղջիկս, այս հողը Մոնթէի արեան գինն ունի, Պետոյի, Հեթանոս Գագոյի, հազարաւոր մեր ազատամարտիկների արեան ու առողջութեան գինն ունի, այսինքն, անգին է...*

*Ու այսօր արդէն Քարվաճառցի տղաներ են զինուոր դառնում ու պաշտպանում մեր անգին հայրենիքը...*

*Ազատագրուած հողից հեռու, այստեղ չքայլած ու այստեղի երեխաների աչքերի ու երազանքների մէջ չնայած ինչ՝ որ պաշտօնեայ յայտարարում է, թէ «ազատագրուած տարածքները կարող են զիջուել»: Ո՞ր հայ երեխայի դպրոցն էք զիջելու, պարոն, մեծագոյն դժուարութեամբ կառուցուած ո՞ւմ տունն էք զիջելու:*

*Սա տարածք չի, սա հայրենիք է, սա առեւտրի առարկայ չէ, այստեղ մարդիկ տներից բացի կեանք են կառուցում: Ուրիշի տունն ու կեանքը դուք ոչ մէկի յանձնել չէք կարող:*



# ԿԻՍԱԼՈՒՍՆԻ ՄԱՅՐԱՄՈՒՏԻՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ԱՐԵԱՆ ԳԵՏԵՐ ԿԸ ՀՈՍԻՆ...

ԺԵՄՄԱ ՊԱՂՏԱՏԵԱՆ

Մրցավազքի մէջ կ'երեւի՝ ով է ուժեղը, ով՝ թոյլը: Էական չէ ընտրութիւնն ասպարէզի: Այն, որ հզօր պետութիւններն ալ կարող են մրցաասպարէզ դուրս գալ, աշխարհին ի ցոյց դնել իրենց ուժն ու կարողութիւնը եւ երրորդ երկրի մը մէջ պատերազմ հրահրել, երկիրն այդ հիմնայատակ աւերակներու վերածելով, այդ մէկն այլեւս զարմանալի չէ:

Համաշխարհային ռազմաքաղաքական ծիրէն ներս այսօր տպաւորութիւն մը կը ստեղծուի, թէ աշխարհի ԳԵՐ-տէրութեան կոչումին համար կը պայքարեն միայն ԱՄՆ-ն ու Ռուսաստանը: Յաւակնորդներու ցուցակը կը ջանան համալրել Իրանը, Չինաստանը, Ֆրանսան (շարքը երկար է): Իսկ արքայական Անգլիան իր «քաղաքական զսպուածութեան»՝ դիւանագիտական ճիշդ հաշուարկի պատճառով, տպաւորութիւն կը ստեղծէ, թէ աշխարհի ամէնէն խաղաղասէր եւ աննկրտում պետութիւնն է: Այդ մէկը համաշխարհային մեծ կեղծիք է, քանի որ աշխարհակործան բոլոր խաղաքարտերը կը բաժնուին նոյն այնտեղ...: Իսկ Թուրքիան կը տառապի «գերտէրութիւններու ռազմաքաղաքական խոհանոց» սպրդելու մոլուցքով, աւա՜ղ եւրոպական «մեծ ընթրիքը» անոր քիմքին հասու չէ:

Այս օրերուն «Արաբական գարնան» 5-ամեայ պատերազմը նոր շրջան թեւակոխած է. կամ սկիզբն է վերջի, կամ ալ վերջը՝ սկզբի, որու ազդարարը տուաւ Ռուսաստանը՝ մտնելով Սուրիա: Աշխարհի ԳԵՐ-իշխանական տիտղոսը նուաճելու համար նախճիրային ռազմադաշտի վերածուած են Մերձաւոր Արեւելքը, որու նմանօրինակը չէ ունեցած արաբական աշխարհը ողջ պատմութեան ընթացքին: Ռուսաստանի շեշտակի մուտքը անակնկալի բերած է ԳԵՐ-հզօրի յաւակնորդ ԱՄՆ-ն ու աշխարհը, իսկ անուրջներով տառապող Թուրքիան տնտեսա-քաղաքական ջղաձգութիւն մը ունի: Երբ ռուսական ռազմական օդուժի կործանիչները հատեցին Թուրք-սուրիական սահմանը, արտօնութեան մասին ակնարկ անգամ չ'ընելով, տեղի տուին Նախագահ Էրտողանի զգացումները, վերջինս յոխորտաց վերանայել Թուրք-ռուսական տնտեսական յարաբերութիւնները եւ ռուսական կազէն հրաժարելու սպառնալիքներ հնչեցուց, շտապեց երկրին մէջ աթոմակայան կառուցող նոր գործընկերոջ մատնանշել՝ ի դէմս ճափոնական ընկերութեան:

Էրտողան Սուրիոյ մէջ իր հետաքրքրութիւններու տապալումի, ազդեցութեան լծակներու կորստի մտավախութենէն փորձեց ձեռնոց նետել Ռուսաստանին:

Չուշացաւ Թուրքիոյ անխոհեմ քայլը. Թրքական ռազմական ուղղաթիռներու կողմէ Հայաստանի օդային տարածքի խախտման փորձը Ռուսաստանին վախցնելու անյաջող միտք էր:

Սակայն, արիւնոտ ապտակը չուշացաւ. Անգարայի պայթիւնը ցնցեց երկիրը:

Պատահական չէր Անգարայի պայթիւնը, որուն մէջ քիւրտ հասարակութիւնը իշխանական յանցակցութիւն կը փնտռէ, իսկ գործող վարչակարգը Ինքնապաշտպանութեան համար «Իսլամական Պետութեան» ազրպէյճանական հետքեր ի ցոյց կ'ընէ աշխարհին: Տարօրինակ է, սակայն փաստ է՝ մէկ ձեռքով կը շոյէ կրտսեր եղբայրը՝ Ազրպէյճանը, միւսով ալ՝ կ'ապտակէ: Այնուամենայնիւ, Էրտողան չխուսանաւեց «ժողովրդավար» Եւրոպայի հեգնանքէն. դեղին քարտ մըն ալ արձանագրեց իր հաշուոյն: Աւելի յստակ՝ ձախողուած «ժողովրդավարութիւն» առարկայի յար անփոփոխ անբաւարարը ամրապնդեց իր դիրքը Թուրքիոյ մէջ:

Յիրաւի, սխալ հաշուարկ էր Թուրք իշխանաւորներու կողմէ Ռուսաստանին վախցնելը: 1 Նոյեմբերին «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան ներկայացուցած յաղթանակը շա՜տ թանկ կ'արժենայ. Թուրք-քիւրտական գերլարուած յարաբերութիւնները երկիրը վերածած են կատարեալ

Շար.ը էջ 18

# ՓԹԻԹ մանկապատանեկան պարբերաթերթ



ՓԹԻԹ մանկապատանեկան պարբերաթերթը կը հրատարակուի Պէյրութի մէջ, 2010 թուականէն ի վեր, նպատակ ունենալով հայ մանուկներուն ու պատանիներուն ընթերցասիրութիւնը քաջալերել, բառամթերքը զարգացնել, տրամաբանութիւնը մշակել եւ բարոյական պատգամներ փոխանցել: ՓԹԻԹ, առաջին համարէն իսկ, արժանացաւ սփիւռքահայ եւ հայրենի մամուլի ու մտաւորականներու եւ բազմաթիւ մանկավարժներու գնահատանքին ու քաջալերանքին, ինչպէս նաեւ՝ վեց տասնեակէ աւելի դրուատալից գրախօսականներու:

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկի Հայկական Բաժինի պատասխանատուները՝ արեւմտահայերէնի պաշտպանութեան իրենց ծրագիրներու ծիրէն ներս, ֆինանսաւորեցին ՓԹԻԹ-ի ելեկտրոնային տարբերակի պատրաստութիւնը, նպատակ ունենալով ՓԹԻԹ-ի բազմաբնոյթ բովանդակութիւնը անվճար կերպով հասանելի դարձնել աշխարհասփիւռ հայ մանուկներուն ու պատանիներուն:

ՓԹԻԹ-ի կայքը՝ www.e-ptit.com արդէն իսկ պատրաստ է: Այնտեղ, ամսական հերթականութեամբ, պիտի տեղադրուին նոր նիւթեր՝ խաղեր, պատմուածքներ եւն.:

ՓԹԻԹ-ի կայքի մեկնարկէն մի քանի ամիս ետք պիտի կատարուի նաեւ մեկնարկը ՓԹԻԹ-ի Application-ին, բջիջային հեռաձայններու վրայ, Android եւ IOS ծրագիրներով:

ՓԹԻԹ-ի խմբագրութիւն



# ԱՀԻՑ ՓԱԽԱՆ ԱՆՕՐԷՆ ՍՏԱՀԱԿ ՏԱԿԱՆՔՆԵՐԸ

«Ձեր այդ Իթթիհատ ընկերները օր մը ձեր ալ գլուխը պիտի ուտեն, Ձեր ազգին ալ»

Անդրանիկ Օզանեան

«Ես այս բոլորը գրեցի, որ աշխարհն իմանար ով է Թուրքը»

Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան՝ Մորգընթաու

*ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ*

*Միջին դարեր, սելջուկ-թուրքերի հարիւր-հարիւր հազար անօրէններ, անապատի դաժանութիւնը իրենց սրտերում, արշաւել էին Հայաստան ու Փոքր Ասիա: Արմէն-հայերի պատմութեան մեծագոյն արհաւիրքն էր լինելու այն: Նրանց հազար-հազար տարիների բնօրրանում, ողջակիզուելու էր արարչական մի ցեղ: 1299 թ. արաբական «Իգոնիա» պետութեան անկումից յետոյ, տեղի Օսման անունով թուրք առաջնորդը տիրել էր նրան, իր անունով այն կոչել՝ «Օսմանեան Պետութիւն»: Պարսկաստանի Շահը պատգամ էր փոխանցել Արեւմուտքին, որ Փոքր Ասիա ներխուժած Սելջուք-թուրքը սպառնալու էր նաեւ իրենց, առաջարկել համատեղ գործողութիւնների դիմել: Անհեռատես, անհեռատես Եւրոպա, տեղի իշխողները մերժել էին, նրանց յորդաները իրենց արշաւանքի ճանապարհին պիտի հրդեհէին շէները, պիտի հասնէին մինչեւ Վիեննա, որի դարպասներում բնութեան արհաւիրքը պիտի խորտակէր իրենց բանակները:*

*Նրանց ցեղից անօրէն մարդիկ, 1889 թուականին Իսթամպուլում ստեղծուած «Միութիւն եւ Առաջդիմութիւն» (Ittihat ve Terakki) կուսակցութեան անդամներն էին: Մինչեւ 1905 թուականները գբաղուել էին քարոզչական գործունէութեամբ, դատապարտել ապտուլհամիտեան վարչակարգը, որը արգելակում էր Թուրքիայի տնտեսական ու մշակոյթային զարգացումը: 1908 թուականին, Ռուս Ցար Նիկոլա II հանդիպելով Անգլիայի թագաւորի հետ, պայմանաւորուել էին բարեփոխութիւններ մտցնել Մակեդոնիայում, որը պատճառ պիտի հանդիսանար նրա անջատմանը Թուրքիայից: 1908 թուականի Յուլիսի 6-ին, այնտեղ կազմաւորուած Երիտթուրք-երի զօրամասը, Հազարապետ Նիազի-Պէյի հրամանատարութեամբ ապստամբել էր, որին միացել նաեւ հազարապետ Էնվէր-ի ջոկատը: Այդ զօրամասերի արշաւանքը դէպի մայրաքաղաք կանխելու նպատակով, Սուլթան Համիտ II, նոյն թուականի Յուլիսի 23-ին, վերականգնել էր 1876 թ. սահմանադրութիւնը: Երիտթուրքերը նոր կառավարութեանը մասնակից չէին դարձել, բանակը իրենց հրամանատարութեան տակ լինելով, հանդէս էին եկել թելադրողի դերում:*

*1908 թուականին, վերնախաւային յեղափոխութեան շնորհիւ Երիտթուրքեր-ի պարագլուխները զաւթեցին իշխանութիւնը: 1909 թուականի Ապրիլ ամսին երկրում կատարուեց հակայեղափոխութիւն, վերականգնուեց Ապտուլ Համիտի ինքնակալութիւնը: Այդ շնագայլերի պարագլուխները ապստանեցին Իսթամպուլի Հայկական կուսակցութեան ղեկավարների բնակարանների թաքստոցներում: Մակեդոնեայից մայրաքաղաք ներխուժած զօրամասերը այն ճնշեցին, գահընկեց արեցին Ապտուլ Համիտին, սուլթան հռչակեցին գահաժառանգ Ռիշատին՝ Մահմէդ V անունով:*

*Երկրում նրանց յաղթանակով հռչակուած՝ «Ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն, արդարութիւն» կարգախօսները սկզբնական շրջանում ամբողջ երկրում ու Հայ բնակչութեան մօտ խանդավառութիւն էր առաջացրել: Հայերը կարծել էին, որ կ՚ազատագրուէին հալածանքներից ու կոտորածներից: Չէին թափանցել այդ ազգի մարդկանց թաքուն նպատակներին, նրանց սպաննելու, տիրելու, յափշտակելու ծիներին: Սկսել էին եղբայրութիւն քարոզել իրենց նոյն դուշմանի հետ: Հայկական կուսակցութիւնները չէին գնահատել քաղաքաքան իրաւիճակը, կարծել էին, որ հասել էր իրենց ժողովուրդի ազատագրութեան պատեհ առիթը: Հայ ֆետայիները իջնել էին լեռներից, յանձնել զէնքերը: Եւ նրանց իշխանութեան գալու առաջին տարեդարձին՝ Ադանա քաղաքում ու նրա մերձակայ շէներում երեսուն հազար հայ քաջերի, կանանց ու մանկանց, տարեցների արարչական արիւնն հոսեց, ափսոս:*

*Ջէ՞նք, զէ՞նք յանձնել դարեր շարունակ իրենց հարստահարած, խոշտանգած, ասպատակած դուշմանին: Հայը դեռ չէր թօթափել դարերով կղերի քարոզած կրօնքի ու աւատապետ իշխանների սեփականութիւնը պահպանելու քարոզները, դարձել կրաւորական, խնդրող, տիրողներից ու հեռու օտարներից արդարութիւն որոնող: Թող գնային Մուսաների Լեռան, Շապին Գարահիսարի, Սասունի ռանչպարների հետ խորհուրդ անէին: Մուսաների Լեռան քաջ մարդիկ զէնք էին մաքսանենգում, պարտադրում զէնք գնել, առանց զէնքի ոչ մի տուն: Թուրք պաշտօնեաներին յայտարարել, որ իրենք հողի մշակներ են, զէնք չեն կրում: Թաքստոցներից հանեցին հին ու նոր զէնքերը, գրկեցին իրենց լեռները, յաղթական ճակատամարտերով սպաննեցին դուշմանի յոխորտանքը: Իսթամպուլի «Մեծ» մարդիկ շինական մարդկանց չափ էլ կանխատեսութիւն չէին ցուցաբերել, աքսորական Ակնունին պիտի յայտարարէր՝ «Պիտի մահանանք, սակայն ի՞նչու այդ սրիկաների ձեռքով, խաբուեցինք»: Հայ մեծերը խաբուեցին, տանուլ տուին ազգին ու Հայկ Նահապետի ժառանգ թողած Արմինա երկիրը: Անդրանիկ Փաշա, նրա սրտում ցեղի կռիւն էր հրաբխացել, ազգի ազատութեան համար դուշմանին զարկելու եղած իրեն, իր քաջերի հոգիներում մարել էր կրաւորական ոգին: Անդրանիկին հրաւիրել էին Պոլիս՝ նրա թեկնածութիւնը առաջադրելու թուրքի մէջլիսում: Անդրանիկ մի անգամ էլ ցուցաբերեց իր քաղաքական հեռատեսութիւնը՝ չխաբուեց, նրանց զգուշացրեց՝ «Ձեր այդ Իթթիհատ ընկերները օր մը Ձեր ալ գլուխը պիտի ուտեն, Ձեր ազգին էլ»:*

*Իթթիհատականների 1902 թուականի առաջին կոնգրեսում, Հայ ազգային կուսակցութիւնները կապեր էին հաստատել նրանց հետ: Փարիզում ու Ժնեւում բանակցութիւններ էին վարել՝ ինքնակալութեան դէմ համատեղ պայքարի միջոցառումներ մշակելու շուրջ: Այն շարունակուել էր մինչեւ 1907 թուականը՝ յանգելով նրանց հետ մերձեցման: Օսմանեան կայսրութեան ընդիմադիր բոլոր կազմակերպութիւնները, Փարիզում տեղի ունեցած համաժողովում որոշել էին տապալել համիտեան վարչակարգը, ստեղծել կառավարման ներկայացուցչական ձեւ: Իթթիհատը, հայկական կազմակերպութիւններին յայտարարել էr, որ Փոքր Ասիայում հայկական պետութիւն ստեղծելու իղձը անիրականանալի է: Սակայն, 1876 թուականի սահմանադրութեան վերականգման դէպքում, հայերը, այլ ազգութիւնների հետ, ինքնավարութեան իրաւունք կը ստանային Օսմանեան պետականութեան շրջանակներում:*

*Իշխանութեան տիրանալուց յետոյ իթթիհատականները ուրացել էին իրենց խոստումները, դարձել ազատագրական շարժումների թշնամիներ: Ազգային հարցերը որոշել էին լուծել նրանց ֆիզիքական ոչնչացմամբ, բացի նրանցից ովքեր թուրք կը դառնային, իսլամութիւն կը դաւանէին: Յայտարարել էին, որ բացի թուրքերից Թուրքիայում ուրիշ ազգեր չկային: 1911 թ. Հոկտեմբեր, Յունաստան-Սալոնիկում իթթիհատ ելուզակների համագումարում՝ նրա պարագլուխներից, տօքդոր Նազըմը ասել էր, որ իրենց պարտքն է իրականացնել Թուրք ցեղին միութիւնը, նրա նախապայմանը «Հայկական Հարց»-ի լուծումն է... կայսրութիւնում պէտք է ոչնչացնել հայերը: Թալեաթը զեկուցել էր հայերի կոտորածների ու աքսորի ծրագրի մասին, իսկ Պէհետտին Շաքիրը այն իրականացնելու համար առաջարկել էր բանտերից ազատ արձակել քրէածին յանցագործներին: Համագումարին որպէս դիտորդ մասնակցած «Իթթիլաֆ» կուսակցութիւնը, Հայկական կուսակցութիւններին զգուշացրել էր Իթթիհատի ծրագրի մասին: Իթթիհատ եռեակի կառավարութեան համաշխարհային պատերազմին մասնակցելը եւ հայկական եղեռնը կանխելու համար՝ Հնչակեանները որոշել էին ահաբեկել նրանց: Նրա իրագործումը իրականացնելու շեմին այն ձախողուել էր... հայու մատնութեամբ: Կուսակցութեան քսան պարագլուխներ, Սուլթան Բայազիտ հրապարակի կախաղանների օղակների տակ աւետել էին արեւելքում ընկերվարական Հայաստանի ծնունդի արշալոյսը:*

*Եւրոպայի մեծ տէրութիւնները նախապատրաստւում էին պատերազմի, Գերմանիայի հետ դաշնակցած Թուրքիան նաեւ նախապատրաստւում էր: Նրա նպատակն էր զաւթել Անդրկովկասը, ինչպէս նաեւ ամբողջ Կովկասը, թրքացնել Թուրքիան, Արեւմտեան Հայաստանում սպաննել Արմին-Հայ ցեղին: Երիտթուրքերը սաստկացրել էին հալածանքները Արեւմտեան Հայաստանում, դադարեցւում էին լրագրերի հրատարակութիւնները, գոցւում էին դպրոցները, մշակոյթային կազմակերպութիւնները, արգելակւում նամակատուների գործունէութիւնը:*

*Նրանք համոզուած էին, որ հայերը կարող էին խոչընդոտել իրենց ծրագրերը: Արեւմտեան Հայաստանում հայերին բնաջնջելու որոշման հետ զուգընթաց, ծրագրել էին Արեւելեան Հայաստանում հայերին ռուսների դէմ հանել: 1914 թուական, կուսակցական հերթական «Ընդհանուր Ժողով» էրզրումում: Նրան շտապ մասնակցելու էր եկել իթթիհատական պա-*

*Շար.ը էջ 19*

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով

Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի

«ԶՈՒԱՐԹՆՈՑ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ԹԵՄԻՍ ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴ՝

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

Կը կազմակերպէ

**«ՅԱՂԹԱԿԱՆ ԱՒԱՐՏ»-Ի ՀԱՄԵՐԳ**
**ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍՐԲԱՑՈՒԱԾ ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ**

որ տեղի պիտի ունենայ

**Կիրակի, Դեկտեմբեր 6-ին, 2015, երեկոյեան ժամը 6:00-ին**

Փասատենայի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ «Կիրակոս» սրահին մէջ։
2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107

Համերգին ելոյթ պիտի ունենան Լոս Անճելըսի նուիրեալ երգիչ-երգչուհիները՝

Ռազմիկ Մանսուրեան
Արմէն Յովհաննիսեան
Սալբի Մայիլեան
Գագիկ Բաղալեան
Նունէ Աւետիսեան - ասմունք
Յարութ Յակոբեան
Դաւիթ Սամուէլեան
Ռուբէն Թելունց
Անահիտ Ներսիսեան
Կը նուագակցէ՝ Փրոֆ. Լեւոն Աբրահամեան
Ռուբէն Յարութիւնեան - դուդուկ
Մերուժան Մարգարեան - ջութակ
Վարդան Յարութիւնեան - դուդուկ, զուռնա., դհոլ
եւ «Զուարթնոց» ժողովրդական պարի խումբը՝
պարուսոյցներ՝ Վարդան եւ Արմինէ Աղաջանեաններու գլխաւորութեամբ։

Համերգը կարգաւորող – Անդրանիկ Մուրադեան

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ ըլլալու
Սրբացուած մեր Նահատակներու «Յաղթական Աւարտ»-ի Համերգին։

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

## ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ, ՈՐՈՆՔ ՆՈՐ ՀԱՅԵԱՑՔ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ ԿԵԱՆՔԻՆ

*-Կեանքի հետաքրքրութիւնը կը կայանայ այն բանի մէջ, որ մենք հակուած ենք փոփոխուելու, շատ բան չենք գիտեր, պէտք է ամէն պահէ օգտուինք ու լաւագոյնը քաղենք կեանքէն՝ առանց նախապէս գիտնալու, թէ ինչ պիտի պատահի յաջորդ պահուն: Գայթակղիչ անորոշութիւն...: (Ճիլտա Ռատնըր)*

*-Այսօր կեանքի ամենատխուր կողմը այն է, որ գիտութիւնը աւելի արագ կը զարգանայ ու կը կատարելագործուի, քան հասարակութիւնը՝ կ՚իմաստնանայ: (Այզէք Ազիմով)*

*- Մարդիկ միանշանակ չար կամ բարի չեն ըլլար: Անոնք կարծես աղցան ըլլան լաւ ու վատ տարբեր բաղադրա մասերով, որոնք միախառնուած են իրարու խառնաշփոթութեան ու հակասութիւններու մէջ:(Լեմընի Սնիքեթ)*

*- Շատ մարդիկ կը ծախսեն իրենց վաստակած գումարները այնպիսի իրեր գնելու համար, որոնց անոնք իրականութեան մէջ պէտք չունին եւ միայն ուրիշներու վրայ տպաւորութիւն ձգելու համար կ՚ընեն այդ գնումները:(Ուիլ Ռոճըրս)*

*-Կեանքի մէջ սխալներ գործելը ոչ միայն աւելի պատուաբեր է, այլեւ աւելի օգտակար, քան կեանքը, որ կ՚ապրիս ոչինչ ընելով:(Ճորճ Պեռնարտ Շօ)*

*- Ամէն ինչ, որ կ՚ընես միայն քեզի համար, կը կորսուի այն ժամանակ, երբ դուն այլեւս չես ըլլար, իսկ այն ամէնը, որ կ՚ընես միւսներուն համար, յաւերժ կը մնայ իբրեւ ժառանգութիւն:(Գալու Նտուգէ Գալու)*

*- Եթէ դուն այժմ ձանձրալի ու տաղտկալի կեանք կը վարես, ատիկա այն պատճառով, որ կեանքիդ ընթացքին շարժած ես այնպէս, ինչպէս քեզի ըսած են մայրդ, հայրդ, ուսուցիչը, վանականը կամ ուեւէ մէկը, ուստի դուն արժանի ես այդպիսի կեանքի:(Ֆրանք Զաբա)*

*- Երբ մենք բան մը ամենաքիչը կը սպասենք, կեանքը մեր առջեւ փորձութիւն կը դնէ՝ փոխուելու մեր քաջութիւնն ու ցանկութիւնը փորձելու համար: Իմաստ չկայ ձեւացնելու, թէ ոչինչ պատահած է կամ ըսել, թէ պատրաստ չենք: Փորձութիւնը չ՚սպասուիր: Կեանքը ետ չի նայիր: Մէկ շաբաթը աւելի քան բաւական է, որպէսզի մենք որոշենք՝ կ՚ընդունինք մեր ճակատագիրը, թէ՝ ոչ: (Փաուլօ Քոէլօ)*

*- Կեանքը բնական ու ինքնաբուխ փոփոխութիւններու ընթացք է: Մի հակառակիք անոր, ատիկա միայն վիշտ կը պատճառէ: Թոյլ տուէք իրականութեան իրականութիւն ըլլալու: Թոյլ տուէք, որ կեանքը բնականօրէն առաջ շարժի այն ուղղութեամբ, որով կ՚ընթանայ: (Լաօ Ցզի)*

*Այն կինը, որի մատները պիտի բռնէր դողով, որի աչքերում գլխապտոյտս պիտի օրօրուէր, ինչ-որ տեղ հիմա երեւի մենակ ու շատ է մենակ. եւ չկայ մէկը, որ աստուածացնի նրա մատների քնքշութիւնը թոյլ: (Վահագն Դաւթեան)*

## ԺՊՏԱԼՈՒ ԵՕԹԸ ՊԱՏՃԱՌ

*Ժպիտը կ՚աշխուացնէ ուղեղի որոշ գործընթացներ, որոնք դրական ազդեցութիւն կ՚ունենան մարդու վրայ: Եօթը պատճառ աւելի յաճախ ժպտալու համար:*

*1. Ժպիտը երջանկութիւն կը պարգեւէ. Ժպիտը ազդանշան կ՚ուղարկէ ուղեղին, որ դուք երջանիկ էք, իսկ երբ դուք երջանիկ էք, մարմնին մէջ կ՚արտադրուի մեծ քանակութեամբ էնտորֆին հորմոնը, եւ ասոր իբրեւ արդիւնք կը բարձրանայ ձեր տրամադ - րութիւնը:*

*2. Ժպիտը եր ջանկութիւն կը պարգեւէ ձեզ շրջա պատող մար դոց. Ժպիտը վարակիչ է: Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ երբ մարդը կը տեսնէ իր ժպտացող ընկերը, ինքնաբերաբար կը սկսի ժպտալ եւ անոր տրամադրութիւնը նոյնպէս կը բարձրանայ:*

*3. Ժպիտը աւելի գրաւիչ կը դարձնէ ձեզ: Ժպտացող մարդիկ աւելի գրաւիչ կը թուին հակառակ սեռի ներկայացուցիչներուն համար: Ասիկա բնական երեւոյթ է, քանի որ դիմացինը կ՚ուզէ իմանալ, թէ ով էք դուք եւ ինչու կը ժպտաք: Ժպիտը աւելի գրաւիչ կը դարձնէ ձեզ, ուրեմն երբ հանդիպման կ՚երթաք, մի մոռնաք ժպտալու մասին:*

*4. Ժպիտը կ՚օգնէ ազատելու ճնշախտէն, յոգնածութենէն, տագնապի զգացումէն եւ լարուածութենէն: Երբ մենք կը ժպտանք, մեր երջանկութեան ազդակները «կը ստիպեն» ազատելու ճնշախտէն, որ դրականօրէն կ՚ազդէ մարդու առողջութեան ընդհանուր վիճակին վրայ:*

*5. Ժպիտը աւելի գրաւիչ է, քան դիմայարդարումը. Մարդոց 69%-ը կը կարծէ, որ ժպտացող կինը աւելի գեղեցիկ է, քան շպարուած ու դիմայարդարուած կինը: Ժպտալու ընթացքին կնոջ դէմքի մկանները կը քաշեն անոր մորթը եւ աւելի երիտասարդ տեսք կու տան անոր:*

*6. Ժպիտը դրականօրէն կ՚ազդէ մարդու առողջութեան վրայ.*

*Ժպիտը դրականօրէն կ՚ազդէ մարդու դիմադրողական համակարգին վրայ: Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ ծիծաղը կ՚այրէ ճարպերը, կը նպաստէ արեան շրջանառութեան, կը նուազեցնէ արեան մէջ շաքարի մակարդակը, կը կարգաւորէ քունը:*

*7. Ժպիտը յաջողակ կը դարձնէ ձեզ. Ժպտադէմ մարդիկ աւելի ինքնավստահ կը թուին: Գործնական հանդիպումներու ժամանակ պէտք է ժպտալ, քանի որ այդպէս դուք աւելի պատուարժան, վճռական եւ ինքնուրոյն մարդու տպաւորութիւն կը ձգէք:*

## ՍՈԽԸ ՕԳՏԱԿԱՐ Է ՎԱՀԱՆԱԳԵՂՁԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԲԱՐԵԼԱՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Սոխը մորթը մաքրող յայտնի միջոց է.անիկա նաեւ հրաշալի կերպով կը սպաննէ մանրէները, կը պարունակէ ֆոսֆորաթթու, որ արեան մէջ հրաշքներ կը գործէ:*

*Ժողովրդական բժշկութիւնը կը պնդէ, որ սոխը ունի հետեւեալ օգտակար յատկանիշները՝*

*Կը մաքրէ արիւնը,*

*Կը սպաննէ մանրէներն ու մակաբոյծները,*

*Կը մաքրէ օդը:*

*Բժիշկները խորհուրդ կու տան վահանագեղձը բուժելու նպատակներով սոխ օգտագործել: Այսպէս՝*

*Կարմիր սոխը բաժնել երկու մասի, իւրաքանչիւր կէսով մերսել պարանոցի այն հատուածը, ուր կը գտնուի վահանագեղձը: Այս գործողութիւնը կատարելէ ետք քնանալ՝ առանց պարանոցը լուալու: Սոխը բնական ճանապարհով կը*

## ՕԳՏԱԳՈՐԾԵՑԷՔ ԴԱՓՆԻԻ ՏԵՐԵՒ՝ ՑԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

*Դափնին մաքրութեան, նպատակասլացութեան, յաղթանակի եւ անմահութեան խորհրդանիշն է: Անիկա կու տայ կենսական ուժ, յաջողութիւն եւ ցանկութիւններու իրականացում:*

*Հին հռոմէացիները եւ յոյները դափնիին կը վերագրէին կախարդական յատկութիւններ, կ՚օգտագործէին զայն իրենց ծէսերուն մէջ եւ կը հաւատային, որ դափնիի տերեւը կը բերէ յաղթանակ, երջանկութիւն եւ յաջողութիւն:*

*Փորձեցէք դուք ալ դափնիի տերեւի օգնութեամբ դէպի ձեզ հրապուրել երջանկութիւնը:*

*-Գրեցէք ցանկութիւն դափնիի տերեւի վրայ, յետոյ նետեցէք զայն կրակի մէջ, եւ այն ամէնը, որ մտածած էք ժամանակի ընթացքին, կը կատարուի:*

*-Սենեակի բոլոր անկիւնները, ուր աւելի յաճախ կ՚ըլլան ձեր հարազատները, մէկական դափնիի տերեւ դրէք, եւ անիկա կը հեռացնէ հիւանդութիւնը ձեր տունէն:*

*-Եթէ միշտ ձեր մօտ դափնիի տերեւ ունենաք, անիկա կը պահպանէ տհաճութիւններէն եւ դժբախտ դէպքերէն:*

*-Եթէ կ՚ուզէք, որ դրական փոփոխութիւններ տեղի ունենան, ուստի ձեռքով փրցուցէք դափնիի տերեւը, շնչեցէք անոր բոյրը եւ բարձրաձայնեցէք ձեր ցանկութիւնները:*

*-Բարձի տակ դրէք դափնիի տերեւը եւ անիկա ձեզի լաւ երազներ պիտի բերէ:*

*-Դափնիի բոյրը կը փրկէ յոգնածութենէն եւ լրացուցիչ ուժ կու տայ:*

*-Եթէ դափնիի տերեւը խաչաձեւ դնէք տան մուտքի գորգին տակ, անիկա յաջողութիւն կը բերէ: Ամիսը մէկ անգամ փոխեցէք տերեւները:*

*-Որպէսզի նորապսակները երջանիկ ընտանիք ունենան, հարսանիքի նախօրէին ամբողջ գիշերը փեսային եւ հարսին կօշիկներուն մէջ դափնիի մէկական տերեւ դրէք, իսկ առաւօտեան հանեցէք զանոնք եւ շնորհակալութիւն յայտնեցէք:*

*-Մուտքի դրան վրայ ամրացուցէք կարմիր թելով իրարու կապուած դափնիի 5 տերեւ, եւ անոնց, որոնք կ՚ապրին այդ տան մէջ, միշտ կ՚ուղեկցի յաջողութիւնը իւրաքանչիւր գործի մէջ:*

*-Դափնիի ճիւղը՝ դրուած փոքրիկի մահճակալին վրայ՝ կը պահպանէ վատ աչքէն:*

*-Գումար հրապուրելու ծէս. վերցուցէք դափնիի 1 տերեւ, անոր վրայ նարինջի իւղ կաթեցուցէք եւ դրէք այնտեղ, ուր սովորաբար կը պահէք ձեր տան գումարը:*

*-Եթէ դափնիի չորցած տերեւներով շրջապատէք յղի կնոջ մահճակալը, անիկա էականօրէն կը հանգստացնէ ցաւերը ծննդաբերութեան ժամանակ:*

## ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՐԵԼԱՒԷ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ

*Մարդիկ, որոնք իրենք իրենց հետ խօսելու սովորութիւն ունին, աւելի լաւ յիշողութիւն ունին, քան անոնք, որոնք կ՚աշխատին բացարձակ լռութեան պայմաններու մէջ: 44 ուսանող ներու մասնակցութեամբ կատարուած գիտափորձին իբրեւ արդիւնք՝ նման եզրայանգման եկած են հետազօտողները:*

*Մասնակիցներուն առաջարկուած են յիշել պաստառի վրայ պատկերուած բառերը՝ նախ կարդալով իրենց մտքին մէջ, այնուհետեւ շշուկով, յետոյ բարձրաձայն՝ նայելով պաստառին, իսկ յետոյ բարձրաձայն՝ դիմելով այլ մարդու:*

*Ամենալաւը յիշուած են այն բառերը, զորս ուսանողները արտասանած են այլ անձի համար: Մասնագէտները ասիկա կը բացատրեն այն հանգամանքով, որ արտասանութեան փաստը ինքնին, նոյնիսկ առանց ձայնի, մեր ուղեղին մէջ կը մեծցնէ զգացողութիւններուն թիւը. այլ խօսքով՝ որքան շատ զգացողութիւններ կը մասնակցին յիշողութեան գործընթացին, այնքան լաւ:*

VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻն

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
Մէկէ աւելի պաշտօններ ստանձնելով, խաչաձեւում պիտի ստեղծուի կեանքիդ մէջ: Վիճաբանութիւններու պարագային, պէտք է իրաւարարի դեր խաղաս եւ օրինաւոր կերպով դատես հարցերը: Դուն քեզ մի մաշեցներ անպէտք բաներու համար:
Բախտաւոր թիւերդ են: 2,11,18,19,28

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20
Նիւթական հարցերով շատ ծանրաբեռնուած ես եւ ելք մը կը փնտռես, քեզի փոխանորդներ կարգելու ես: Ճարպիկութեամբ եւ խոհեմութեամբ վարուելու ես կողակիցիդ հետ, միեւնոյն ատեն ըլլալով սիրալիր:
Բախտաւոր թիւերդ են: 9,17,20,25,26

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20
Զուգադիպութեամբ գործ մը պիտի առաջարկուի քեզի, ընդունելու համար երկար պէտք չունիս մտածելու: Խարդախութիւն ընողներէ հեռու մնացիր: Ամէն բանի մի հակազդեր, լաւ է որ հետեւիս ցուցմունքներու:
Բախտաւոր թիւերդ են: 3,5,11,17,27,31

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22
Գիրք կարդալը շատ կը սիրես, սակայն ժամանակդ կը վատնես այլ գործերով: Նոր խոստումներ մի ըներ, եթէ պիտի թերանաս զանոնք իրագործելու: Կեանքդ փոխելով նոր ընթացք պիտի ստանայ: Աւելի ուրախ պիտի լինես:
Բախտաւոր թիւերդ են: 8,14,19,25,31

**ԱՌԻՒԾ** Յուլիս 23-Օգոստոս 22
Նպատակի փոփոխութիւն մը դէմ առ դէմ պիտի հանէ քեզ ճշմարտութեան մը առջեւ: Ապագայի նկատմամբ լաւատես եղիր եւ յուսադրուիր նոր խոստումներով: ժամանակի մը համար հեռու մնացիր շուկաներէն:
Բախտաւոր թիւերդ են: 4,5,12,24,28

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Կեանքդ վերածած ես խառնիճաղանճ վիճակի մը եւ կը փորձես դուրս գալ այդ վիճակէն: Անարժէք խօսքերէ բնաւ մի խաբուիր: Գուրգուրանքով եւ կարեկցութեամբ զօրակից կանգնիր տկարներու:
Բախտաւոր թիւերդ են: 1,10,15,21,26

**ԿՇԻՌՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Առանց կողակիցիդ հետ հաղորդակցելու, ճակատագրական որոշում մը պիտի առնես ապագայիդ նկատմամբ: Վարուելակերպդ չի համապատասխանիր բնութեանդ հետ: Արտաքին տեսքերէ մի խաբուիր:
Բախտաւոր թիւերդ են: 6-14-24-29-35

**ԿԱՐԻճ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Անթիւ մարդոց հետ ընկերակցելով, յաճախ սխալ անձերու պիտի հանդիպիս եւ տպաւորուիս անոնցմով: Պարտաւորուած չես գործերուդ ուղղութիւնը փոխելու: Դուն քեզ լաւ զարգացուր:
Բախտաւոր թիւերդ են: 7,16,26,27,32

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Արտաքին գործունէութիւններու նպատակը հետապնդելով, պիտի հասնիս առաջնակարգ դիրքերու: Պատրաստ եղիր լաւ լուրերու, որոնք միտքդ պիտի նորոգեն: Անդամակցիր մարզական գործունէութեան մը:
Բախտաւոր թիւերդ են: 2,8,16,24,31

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
Այս շաբաթ մեծ ամբոխի մը ներկայութեան ջղային պիտի դառնաս, մի փորձեր ճնշում բանեցնել ոեւէ մէկու վրայ: Վստահ եղիր խօսած խօսքերուդ վրայ եւ մի երկմտիր որոշումներ առնելու:
Բախտաւոր թիւերդ են: 4,14,23,27,34

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18
Այս շաբաթ շատ հաւանական է որ մասնակից դառնաս բարեկամդ հոգալու գործին մէջ: Գործակից պիտի դառնաս մեծ ծրագրի մը իրականացման եւ յաջողութեան: ժամանակ տրամադրէ տանդ գործերուն:
Բախտաւոր թիւերդ են: 10,16,27,31,35

**ՁՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20
Բարեկամներդ մեծ դեր կը խաղան առօրեայ կեանքէդ ներս, անոր համար շատ կարեւոր է որ լաւ բարեկամներ ընտրես: Դժուարին կացութեան մը պիտի մատնուիս, որմէ դիւրութեամբ դուրս պիտի գաս: Սիրտդ զօրացուր եւ անուր մնացիր:
Բախտաւոր թիւերդ են: 8-16-22-28-33

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻԼԱՏԵԼԻՍՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

*Շարունակուածէջ8-էն*

*վերացման ու կանխարգելման անհրաժեշտութեան մասին: Հայաստանի Ֆիլատելիստների միութեան նախագահ Յովիկ Մուսայէլեանի խօսքով՝ ամբողջ աշխարհում ընդունուած կարգ է ֆիլատելիայի միջոցով ճանաչելի դառնալ աշխարհում:*

*«Նամականիշների միջոցով նա» երկիրն է ճանաչելի դառնում եւ երկրի համար կարեւորագոյն իրադարձութիւններն են դառնում ճանաչելի: Մենք այս ցուցահանդէսի միջոցով ուզում ենք աշխարհին եւս մէկ անգամ ներկայանալ ինտելեկտին ապաւինող երկիր որպէս յիշողութիւն եւ ապագային միտուած ծրագրեր ունեցող ազգ»:*

*Մօտ 5 երկրից 40 մասնակից իրենց իւրօրինակ հաւաքածուներն են ներկայացրել այս ցուցահանդէսին: Հայաստանի Ֆիլատելիստների միութեան նախագահը ցուցահանդէսին ներկայացրել էր Հայաստանի անկախ պետականութիւնը բնորոշող նամակինշների իր անձնական հաւաքածուից մի մաս:*

*ԵՄ խորհրդարանում Հայաստանի նախագահների ելոյթներին նուիրուած ծրարներ, ծրարներ նուիրուած նաեւ այն միջազգային կառոյցներին, որոնց անդամակցում է Հայաստանը, սրանք նոյնպէս հաւաքածուի մի մասն էին: Գրեթէ 80 տարուայ պատմութիւն ունեցող հայկական ֆիլատելիան ունի բաւական լաւ աւանդոյթներ, ասում է Յովիկ Մուսայէլեանը. ապացոյցը՝ հայ ֆիլատելիստ Եուրի Կուպալեանի՝ միջազգային ֆիլատելիստական ցուցահանդէսում ոսկէ մետալի արժանանալն է:*

*Նամականիշների առաջին ոչ պաշտօնական բնոյթի թողարկումները եղել են 1916-18 թուականին: Ցեղասպանութեանը յաջորդող տարիներին ֆիլատելիան օժանդակել է նաեւ ցեղասպանութիւն վերապրածներին՝ հանգանակութիւններ կազմակերպելու հարցում:*

*Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն Հայկ Դեմոյեանը կարեւորեց Ֆիլատելիայի լեզուով ծանր յանցագործութեանն անդրադառնալն ու աշխարհին եւս մէկ անգամ հայոց ցաւի մասին այս միջոցով լսելի դարձնելը: Արժանթինի հայ ֆիլատելիս Աւետիս Քէչեանն էլ, ում Հայաստանի ֆիլատելիստների միութիւնն ընտրել է ժիւրիի անդամ, շատ տպաւորուած էր ներկայացուած հաւաքածուներով, սակայն ամենագրաւիչն իր համար մէկն է:*

*«Արտաշէս Տարումեանի Թուրք-ռուսական պատերազմը ներկայացնող հաւաքածուով»:*

## ԼԵՈՆԻԴ ԱԶԳԱԼԴԵԱՆ

*Շարունակուածէջ14-էն*

*նութեամբ « կառավարման համակարգերի աւտոմատացման խնդիրներով, գիտական ուսումնասիրութիւնների աւտոմատացուած համակարգերի հարցերով: Տարբեր ժամանակաշրջաններում զբաղեցրել է Պետպլանի հաշուողական կեդրոնում, Լազերային տեխնիկայի գիտաարտադրական միաւորումում, «էներգիա» գիտաարտադրական միաւորումում « Ատոմային էլեկտրակայանների համամիութենական գիտահետազօտական ինստիտուտի Երեւանի մասնաճիւղի համակարգային ծրագրաւորման եւ հաշուողական տեխնիկայի գծով բաժնի վարիչի պաշտօններ: Ղարաբաղեան շարժման սկզբնաւորման օրից Ազգալդեանը, որպէս ռազմական առաջատար գործիչ, մասնակցել է ազգային-ազատագրական պայքարին, գործուն դեր է ունեցել ազգի սրբազան իղձերն ու արժանապատւութիւնը ամէն տեսակի ոտնձգութիւններից զէնքը ձեռքին պաշտպանելու ոգորումներում: 1990 թ. փետրուարից վարել է «Անկախութեան բանակ»ի հրամանատարութիւնը, կազմակերպել մի շարք շրջանների եւ յատկապէս Վարդենիսի ինքնապաշտպանութիւնը, մասնակցել ազատագրական մարտերի, այդ թւում յատկապէս Նիւվադիի առաջին գրոհին, իսկ Մայիսի 27-ի կայարանի եւ Սովետաշէնի արիւնալի սադրանքից յետոյ ծրագրաւորել եւ իրականացրել խորհրդային պատժիչ զօրքերի Երեւան ներթափանցման խոչընդոտումը: Ազգալդեանը յետագայում իր ճակատագիրն ամբողջութեամբ եւ վերջնականապէս կապել է Արցախի ազատամարտի հետ, սկզբում գործելով Շահումեանի, այնուհետեւ՝ Մարտակերտի շրջաններում: Արցախի ազատամարտին նոր թափ հաղորդելու նպատակով էլ 1991 թուականի Յունիսին, Յովսէփ Յովսէփեանի հետ միասին, նա ստեղծել է «Ազատագրական բանակ» ռազմական կազմակերպութիւնը, որը, թէկուզ միայն Հայաստան-Արցախ-Սփիւռք ճիգերի համադրման իմաստով, նոր որակ էր հայ ժողովրդի գոյամարտին ծառայագրուած շարժումների շղթայում եւ որի գլխաւոր հրամանատարը մնաց մինչեւ իր կեանքի վերջը:*

*Ազգալդեանը իր մահկանացուն է կնքել 1992 թուականի Յունիսի 21-ին, Մարտակերտի շրջանում, Տօնաշէն գիւղի մօտ թշնամու դաւադիր կրակոցներից: Յետմահու պարգեւատրուել է ՀՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով:*

## ԿԻՍԱԼՈՒՍՆԻ ՄԱՅՐԱՄՈՒՏԻՆ

*Շարունակուածէջ15-էն*

*քաոսի, Իսլամական Պետութեան հետ համագործակցումը իսկական գլխացաւանք դարձած է. օձը տաքցնողին ալ կը խայթէ: Մէկ խօսքով՝ անորոշ ու անկանխակալ մշուշի մէջ է Թուրք իշխանութեան վաղուայ արշալոյսը, քանզի կիսալուսնի մայրամուտին Թուրքիոյ քաղաքներու մէջ տակաւին «արեան գետեր» կը հոսին:*

**Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
**T: (626) 797-7680 F: (626) 797-6863**
**massis2@earthlink.net**

## ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ ԱՒԱՐՏԱԾ Է

*Շարունակուածէջ 13–էն*

*հայկական Հիմնադրամին, երբեք պիտի չկարենայինք մեր առաքելութիւնը իրականացնել: Մեր գործակցութիւնը կատարելապէս կը համընկնի մեր երկու կազմակերպութիւններու նպատակներուն»:*

*Էտվէնթիսթ Հէլթ եւ Կլէնտէյլ Էտվէնթիսթ Բժշկական Կեդրոնի մայր կազմակերպութիւնը, ինչպէս նաեւ կազմակերպութեան եւ բժշկական կեդրոնի շարք մը ղեկավարները Նոյեմբերեանի Հիւանդանոցին նուիրեցին առաջնային օգնութեան սարքաւորումներով օժտուած քառամուղ (all-wheel drive) հիւանդակառք մը, որ յարմար է անսալարկ ճամբաներու վրայ գործարկման համար: Իսկ իր կողմէ եւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան Շրջանի նախագահ Անդրանիկ Պաղտասարեանը նուիրեց նոյնանման հիւանդակառք մը: Այս նուիրաբերումներէն առաջ, հիւանդանոցը ունէր միայն մէկ հիւանդակառք, որ չափազանց հին էր եւ յաճախ կը փճանար:*

*Նաեւ շնորհիւ Կլէնտէյլ Էտվէնթիսթի ու Հիմնադրամի գործակցութեան, Նոյեմբերեանի Հիւանդանոցի վիրաբուժական կարողութիւնը կրկնապատկուեցաւ եւ վիրահատական սենեակի կատարեալ արդիականացմամբ: Առաքելութենէն առաջ իսկ, Կլէնտէյլ Էտվէնթիսթը Նոյեմբերեանի Հիւանդանոցին նուիրեց թմրեցման մեքենայ մը եւ հսկիչ պաստառներով ու այլ լրացուցիչ պարագաներով: Ասոր յաջորդեցին Կլէնտէյլ Էտվէնթիսթին կողմէ Նոյեմբերեանի Հիւանդանոցին նուիրուած, 2.5 թոն ընդհանուր կշիռքով բժշկական պաշարն սարքաւորումները:*

*«Մեր առաքելութեան մեծագոյն նուաճումը Հայաստանի մէջ վստահութիւն յառաջացնելն էր», յայտնեց Բժ. Յարութ Մեսրոպեանը: «Արդարեւ, Կլէնտէյլ Էտվէնթիսթն ու Հայաստան Համահայկական Հիմնադրամը Նոյեմբերեանի ժողովուրդին հետ կարեւոր կապ մը ստեղծեցին եւ իրենց նուիրմամբ ու աշխատանքով ցոյց տալով, թէ ի՞նչ կարելի էր իրագործել: Հոյակապ էր: Ես իմ ուժերովս կրնամ որոշ տարողութեամբ ծառայութիւններ բերել, բայց հսկայական է արդիւնքը, երբ կ'աշխատինք միացեալ ուժերով... Ասիկա եզակի առիթ մըն էր»:*

*Հայաստան Համահայկական Հիմնադրամը առաքելութեան աշխատանքները համակարգեց Հայաստանի Առողջապահութեան Նախարարութեան հետ: Աշխատակազմը ընդունուեցաւ Նախարար Արմէն Մուրադեանին կողմէ: Նախարարը բարձր գնահատեց Հայաստանի գիւղական շրջաններուն, յատկապէս Տաւուշի մէջ բժշկութիւնը բարելաւելու վերաբերեալ Հայաստան Համահայկական Հիմնադրամին ու Կլէնտէյլ Էտվէնթիսթին տարած ջանքերը:*

*Առաքելութեան աւարտին, աշխատակազմը ընդունուեցաւ Նախագահ Սերժ Սարգսեանին կողմէ: Նախագահը շնորհակալութիւն յայտնեց աշխատակազմի բոլոր անդամներուն եւ Հայաստանի համար խիստ կարեւոր տարածաշրջանի մը օգնութեան ի խնդիր իրենց կատարած գործին համար:*

*«Երախտապարտ եմ այս առաքելութեան աշխատակազմի մէն մի անդամին», յայտնեց Հայաստան Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ Արեւմտեան Շրջանի նախագահ Անդրանիկ Պաղտասարեանը: «Կլէնտէյլ Էտվէնթիսթ Բժշկական Կեդրոնը, իր նախագահ եւ Քէվին Ռապըրթսին հետ, սրտանց ծառայեց Հայաստանի մեր քոյրերուն ու եղբայրներուն: Շնորհիւ Կլէնտէյլ Էտվէնթիսթին եւ Հայաստան Համահայկական Հիմնադրամին, բժշկական առաքելութեան ամբողջ գաղափարը վերաբնորոշուեցաւ, հայրենիքի մէջ նմանօրինակ առաքելութիւններու համար նոր չափանիշ մը ստեղծելով: Նոյեմբերեանի Հիւանդանոցին ու Կլէնտէյլ Էտվէնթիսթին միջեւ հեռաբժշկական (telemedicine) կամուրջ հաստատելու թէ հիւանդանոցի վիրաբուժական կարողութիւնը բարելաւելու ընդմէջէն, այս առաքելութեան հայեացքը միշտ յառած մնաց ապագային»:*



## ԱՅԻՑ ՓԱԽԱՆ ԱՆՕՐԷՆ ՍՏԱՅԱԿ ՏԱԿԱՆՔՆԵՐԸ

*Շարունակուածէջ 16–էն*

*ռազլուխներից՝ Պեհահետին Շաքիրը: Պահանջել էր պատերազմի դէպքում պաշտպանել Թուրքիային, բանակ զօրակոչել զէնքի ընդունակ հայ տղամարդկանց, Կովկասում ռուսների դէմ ապստամբութիւն կազմակերպելու համար կամաւորական լեգէոններ ուղարկել: Ժողովը մերժել էր այն, համոզուած լինելով, որ հայը ռուսի դէմ զէնքի չէր դիմի: Պարտաւորուել էին պատերազմի դէպքում որպէս Թուրքիայի քաղաքացիներ օրինապահ լինել: Այդ եւ Վանի ինքնապաշտպանութեան կռիւները իթթիհատական եռեակը համարել էր «Դաւաճանութիւն», հարուած «կռնակից», Գերմանացի Լեփսիուսի հետ հանդիպման ատեն պիտի ասէր էնվերը:*

*1914 թուական, աշխարհի պատերազմ: Մի կողմից գլխաւորապէս Գերմանիա, Աւստրիա-Հունգարիա, միւս կողմից «Անդանդի» (Համաձայնողական) պետութիւններ՝ Անգլիա, Ֆրանսա, Ռուսաստան, յետագայում ԱՄՆ: Նրանց կռիւը իրենց ազգային շահերի ու աշխարհի վերաբաժանումն էր: Պետութիւնը գաւթած «Իթթիհատական Եռեակ»-ը, Գերմանիայի հետ դաշնակցելով պատերազմի տարաւ երկիրը: Արմին-հայերի նախնիների Արմինա երկրի Տուշպա-Տուշպուէա-Վանի կառավարիչ Ճեւտէթի նուաստացումներին, հալածանքներին, ահաբեկումներին հակազդելու համար Վանեցին զէնքի դիմեց, ճակատեց թուրքի զօրքի ու աշխարհայինների ոհմակներին, յաղթական մարտեր մղեց նրանց դէմ: Գերման սպան պիտի ասէր՝ «Ցերեկը քանդում ենք նրանց պատնէշները, գիշերը նրանք վերականգնում են, այս ի՜նչ ժողովուրդ են»: Հայոց քաջերի քաջ Անդրանիկ Փաշան, ազգի կռուին կամաւորագրուած մարտիկներով, ռուսական զօրագունդերի հետ առաջինը հասաւ Վանի դարպասներ, անագորոյն թուրք Ճեւտէթը փախաւ: Հայու յաղթանակի բերկրանքը դեռ չմարած, Ռուսի բանակը անբացատրելի ու չարդարացուած նահանջ կազմակերպեց: Վանի ու Վասպուրականի շրջանների հայ բնակչութիւնը, մօտաւորապէս հինգ հարիւր հազար, նրանց հետեւեց դէպի արեւելեան կողմն իրենց աշխարհի: Բացի ազնուազարմ ԱՄՆ Նախագահ Ուիլսոնի, մարդասէր ու արդարամիտ Նորվէկիայի զաւակ Նանսէնի, ցարական Ռուսաստանը չուզեց հայերով Հայաստան, այն չուզեց նաեւ Եւրոպան: Թուրքին ազդարարեցին, որ իրենց ոճիրի համար պատասխանատու կը լինէին, նոյնիսկ այդ պատասխանատւութիւնն էլ հայերը իրականացրին...:*

*1915 թուական, չարագուշակ Ապրիլի 24-ի լուսաբացին, մի վիժուածք Հայու նախօրօք կազմած ցուցակով, կալանեցին Իսթամպուլի 240 մտաւորականներին, տարագրեցին Էնկիւրիի շրջանի Ջանգըրը ու Այաշ բնակավայրեր: Հայեր, Արդարադատութեան Միջազգային Դատարանում Թուրքիայի դէմ դատ չէն յարուցում՝ նրանց ու բոլոր 760 մտաւրականների սպանդի համար: Թուրքի Նախագահ Կիւլ պիտի յայտարարէր, որ նրանք ահաբեկիչներ էին, ինչպիսի սարսափ ազդող ճիւաղների մեղադրանք: Հրովարտակներ, հեռագիրներ ուղարկեցին շրջանների վալիներին, կուսակալներին, կառավարիչներին՝ առանց խտրութեան սպաննել, տարագրել թրքութիւնն ու իսլամ կրօնը չդաւանած հայերին, կախաղան հանել, այրել նրանց տները ովքեր նրանց կը թաքցնէին իրենց մօտ: Գոհաբանութեան խօսք նրանց ու այն պաշտօնակալ մարդկանց, որոնք ի գին իրենց զբաղեցրած պաշտօնների հրաժարուեցին կատարելու Իթթիհատի տարագրութեան հրամանագրերը: Անզօր եմ նկարագրելու տարագրութեան սարսափները, արարչական ցեղի ողջակիզումը: Դժխեմ աշխարհ, 195 պետութիւններից միայն քսանն ու քիչ աւելին են ասել, թուրքը ցեղասպանութիւն է կատարել, յափշտակել հայու արարած անչափելի հարստութիւնը, երկրի տնտեսութիւնն է հիմնադրել: Նորէն քաղաքականութիւն ու երկրի շահեր: Թալեաթ պիտի յայտարարէր, որ Սուլթան Համիտի փոխարէն ինքն ինն ամսում լուծել էր Հայոց հարցը:*

*(Շարունակելի)*

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՅՈՎԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը իր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի մօր, Տիկ. Մարինա Սարգիսեանին, զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար՝ Յովհաննէս Պալայեանին, Տէր եւ Տիկ. Ներսէս եւ Սրբուհի Պալայեանին եւ Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Գոճապապեանին:*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

-----------------------------------------

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 * $100,00 (first class) for USA**

**$ 125,00 (Air Mail) for Canada.**

**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------

**Address:** ----------------------------------------

**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------

**Country:** ------------

**Tel :**----------------------- **Email:** -------------------------

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՋԱԽՋԱԽԵՑ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԳՐԱՒԵՑ 2-ՐԴ ՏԵՂԸ




*Շախմատի Հայաստանի տղամարդկանց հաւաքականը արծաթէ մեդալ նուաճեց Իսլանդիայում աւարտուած շախմատի Եւրոպայի թիմային առաջնութիւնում:*

*Եւրոպայի ախոյեանի տիտղոսն 8 տարուայ ընդմիջումից յետոյ նուաճեց Ռուսաստանի հաւաքականը, որը վերջին տուրում ոչ ոքի էր խաղացել Հունգարիայի հետ եւ 15 միաւորով գրաւել առաջին տեղը:*

*Վերջին՝ 9-րդ տուրում, մեր շախմատիստները վստահ յաղթեցին Վրաստանի հաւաքականին՝ 3:1: Լեւոն Արոնեանը եւ Սերգէյ Մովսէսեանը պարտութեան մատնեցին իրենց մրցակիցներին, իսկ Գաբրիէլ Սարգսեանն ու Հրանտ Մելքումեանը ոչ-ոքի խաղացին:*

*Հայաստանի ընտրանին վաստակեց 13 միաւոր եւ Հունգարիայի ու Ֆրանսայի հետ բաժանեց 2-4-րդ տեղերը: Լրացուցիչ գործակիցներով Հայաստանի հաւաքականը ճանաչուեց երկրորդը, իսկ Ֆրանսան՝ Երրորդը:*

*Հայաստանի հաւաքականը նախորդ անգամ Եվրոպայի փոխախոյեան դարձել էր 2007-ին, երբ ոսկէ մեդալը դարձեալ նուաճել էին ռուսները: Այս տարի Եւրոպայի ախոյեանի տիտղոսը պաշտպանում էին ադրպէյճանցիները, որոնք 11 միաւորով գրաւեցին 7-րդ տեղը:*

*Կանանց Հայաստանի հաւաքականը վերջին տուրում 3.5:0.5 հաշուով յաղթեց Չեխիային: Հայկական թիմի առաջատար Էլինա Դանիէլեանը, երրորդ ու չորրորդ համարներ Լիլիթ Գալոյեանը եւ Մարիա Կուրսովան յաղթանակներ տարան, իսկ Լիլիթ Մկրտչեանը ոչ ոքի խաղաց երկրորդ խաղատախտակի վրայ: Կանանց Հայաստանի հաւաքականն առաջնութիւնն աւարտեց 10 միաւորով՝ զբաղեցնելով 11-րդ տեղը:*

*Կանանց Եւրոպայի ախոյեան դարձան ռուսները, որոնք վաստակեցին 17 միաւոր: Ուկրաինուհիները չպաշտպանեցին տիտղոսը եւ 15 միաւորով գրաւեցին երկրորդ տեղը, իսկ վրացուհիներն արժանացան պրոնզէ մեդալների՝ 14 միաւոր:*

## ՊՐԷՄԻՅԵՐ ԼԻԳԱՆ ՈՒՆԵՑԱՒ ՍԵՆՍԱՑԻՈՆ ԱՌԱՋԱՏԱՐ

*Անգլիական Պրէմիյեր լիգայի 13-րդ տուրի արդիւնքում սենսացին առաջատար դարձաւ «Լեսթերը», որն օգտուեց առաջատարներ Լոնտոնի «Արսենալի» ու «Մանչեսթեր Սիթիի» պարտութիւններից:*

*Խաղային օրուայ վերջին խաղում «Մանչեսթեր Սիթին» տանը 1:4 հաշուով պարտուեց «Լիւերպուլին» եւ չօգտուեց առաջին տեղ վերադառնալու հնարաւորութիւնից:*

*«Լեսթերը» հաւաքել է 28 միաւոր եւ 2 միաւոր առաջ անցել երկրորդ տեղ բարձրացած «Մանչեսթեր Եունայթէդից»: 3-4-րդ տեղերը բաժանող «Արսենալը» եւ «Մանչեսթեր Սիթին» առաջատարին զիջում են 2-ական միաւոր:*

*Յիշեցնենք, որ «Լեսթերի» անգլիացի յարձակուող Ջէյմի Վարդին այս տուրում գոլ էր խփել Պրէմիյեր լիգայի 10-րդ խաղում անընդմէջ՝ կրկնելով Հոլանդիայի հաւաքականի եւ «Մանչեսթեր Եունայթեդի» նախկին ռմբարկու Ռուդ վան Նիստելրոյի ռեկորդը:*

## ՌՈՆԱԼԴՈՒ. ԿԱՄ ԿԸ ՀԵՌԱՆԱՅ ԲԵՆԻՏԷՍԸ, ԿԱՄ՝ ԵՍ

*Մադրիդի «Ռէալի» յարձակւող Կրիշտիանու Ռոնալդուն շարունակում է դժգոհել թիմի գլխաւոր մարզիչ Ռաֆայէլ Բենիտէսից եւ վերջնագիր է ներկայացրել ակումբին:*

*Սպանիայի առաջնութեան 12-րդ տուրում կատալոնական «Բարսելոնայից» 0:4 հաշուով կրած պարտութիւնից յետոյ Պորտուգալիայի հաւաքականի աւագը յայտարարել է հետեւեալը. «Կամ կը հեռանայ Բենիտէսը, կամ՝ ես»,- գրում է Gazzetta dello Sport-ը՝ յղում անելով Fox-ին:*

*Յիշեցնենք, որ 12-րդ տուրից յետոյ «Ռէալը» 6 միաւոր զիջում է առաջատար «Բարսելոնային»: Նախորդ անգամ Արքայական ակումբը սեփական խաղադաշտում 0:4 հաշուով պարտուել էր 1990 թուականին՝ «Օսասունայի» դէմ խաղում:*




## ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՀԱՄԸ ՅԱՂԹԵՑ՝ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՎ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆԻ ՏԻՏՂՈՍԸ




*Գերմանիայի Հանովեր քաղաքի "TUI Arena"-ում կայացաւ հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ, գերմիջին քաշային կարգում WBO վարկածով աշխարհի ախոյեան 35-ամեայ Արթուր Աբրահամի եւ նրա մրցակից 33-ամեայ բրիտանացի Մարտին Մարէյի տիտղոսային մենամարտը: 12 ռաունդ տեւած մարտում Արթուր Աբրահամը միաւորների առաւելութեամբ (115:112, 112:115,116:111) յաղթեց մրցակցին՝ տօնելով իր պրոֆեսիոնալ կարիերայի 44-րդ յաղթանակը:*

*Արթուր Աբրահամը (Աւետիք Աբրահամեան) ծնուել է 1980 թուականի Փետրուարի 20-ին, Երեւանում: Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում բնակւում է 2004 թուականից: ՀՀ քաղաքացի լինելուց բացի՝ 2005 թուականից ունի նաեւ Գերմանիայի քաղաքացիութիւն:*

*Մանկութեան տարիներին ՀՀ-ում լրջօրէն զբաղուել է հեծանուասպորտով, եղել է Հայաստանի բազմակի ախոյեան:*

*IBF վարկածով աշխարհի ախոյեանի տիտղոսն առաջին անգամ նուաճել է 2005 թուականին՝ նոկաուտով առաւելութեան հասնելով նիգերիացի Իկեկէ Քինգսլիի նկատմամբ: Այդ տիտղոսը Աբրահամը պաշտպանել է մինչեւ 2009 թուականը:*

*Իր մարզական կարիերայի ընթացքում ունեցել է 48 մենամարտ, որոնցից 44-ում յաղթել է՝ համաշխարհային դասակարգման աղիւսակներում գրաւելով առաջատար հորիզոնականներ: 6 տարի (2006, 2007, 2008, 2009, 2012, 2014) Աբրահամը ճանաչուել է Գերմանիայի լաւագոյն բռնցքամարտիկ՝ ըստ գերմանական հեղինակաւոր "Box Sport" ամսագրի վարկանիշի:*

*Հայոց բանակում ծառայած պրոֆեսիոնալ բռնցքամարտիկը Հայաստանի զինուած ուժերի «Անդրանիկ Օզանեան» շքանշանակիր է (2007թ. Յունիսի 1-ից):*

## ԵՒԳԵՆԻ ԼՈՎՉԵՒ. ՈՉ ՈՔ ՉԻ ՀԱՍԿԱՆՈՒՄ, ԹԷ ԻՆՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՅՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆ ՀՐԱՇԱԼԻ ՌՄԲԱՐԿՈՒԻ ՀԵՏ

*Ռուսական Sovsport կայքում անցկացուել է քուէարկութիւն «Ո՞վ է «Սպարտակի» յետընթացի պատճառը» թեմայով: Հարցուածների մեծ մասը (14.5 տոկոս) քուէարկել են Հայաստանի հաւաքականի յարձակուող Յուրա Մովսիսեանի օգտին: Sovsport-ի վերլուծաբան ու «Սպարտակի» նախկին ֆուտպոլիստ Եւգենի Լովչեւն ամփոփել է հարցման արդիւնքները:*

*«Յուրա Մովսիսեանը յոյսեր ներշնչեց, երբ առաջին խաղում 3 գնդակ ուղարկեց «Թերեկի» դարպասը: Յետոյ նա սկսեց նահանջել, իսկ «Սպարտակի» երկրպագուների այս սերունդի համար ֆուտպոլիստի հանդէպ սիրուց դէպի ատելութիւն մէկ քայլ է:*

*Ոչ ոք չի հասկանում, թէ ինչ տեղի ունեցաւ հրաշալի ռմբարկուի հետ, որը Մոսկուա էր ժամանել «Կրասնոդարից»: Ոմանք Յուրայի յետընթացը բացատրում են, որ նա չի համապատասխանում թիմի ոճին: Նրան ձեռք են բերել ոչ թէ գլխապտոյտ խաղ կազմակերպելու համար, այլ գոլեր խփելու»,- ասել է Լովչեւը:*

*Յիշեցնենք, որ վերջերս ռուսական մամուլում լուրեր են շրջանառւում, որ «Սպարտակը» մտադիր է այս ձմռանը տրանսֆերի հանել հիմնական կազմի մի քանի ֆուտբոլիստների, այդ թւում՝ Արաս Օզբիլիսին եւ Յուրա Մովսիսեանին:*

## ՈՒՍԷՅՆ ԲՈԼԹԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼ «ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԷԴԻ» ՀԵՏ

*Օլիմպիական խաղերի վեցակի ախոյեան, 100 եւ 200 մետր վազքի աշխարհի ռեկորդակիր Ուսէյն Բոլթը վստահ է, որ կարող է օգուտ տալ «Մանչեսթեր Եունայթեդին»: Այդ մասին նա ասել է անգլիական ֆուտպոլային ակումբի հեռուստաալիքի եթերում:*

*«Ես կարծում եմ, որ կարող եմ փորձնական պայմանագիր կնքել, իսկ յետոյ կը տեսնէինք, թէ ինչ կը ստացուէր: Ակումբում կ՚ասէին՝ համապատասխանում եմ, թէ ոչ: Կարծում եմ, որ ես օգտակար կը լինէի ակումբին, քանի որ ունեմ լաւ ֆիզպատրաստուածութիւն, արագ եմ, կարողանում եմ վերահսկել գնդակը, հասկանում եմ խաղը: Փորձնական պայմանագիր կնքելիս կարող են առաջարկել եւ հինգ տարուայ համագործակցութիւն»,- ասել է Ջամայկացի արագավազորդը:*

*«Մանչեսթեր Եունայթէդի» մեծ երկրպագու Ուսէյն Բոլթը նախկինում եւս բազմիցս յայտարարել է, որ երազում է ուժերը փորձել ֆուտբոլում:*